

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԿՐԵՎԱՆ

№ 8

1967

ՍԵԴՐԱԿԻ ԲԱՐԻՇԻԴԱՐՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԵԼԻՔՆԵՐՆ ՈՒ ՏԱՆՈՒՏԵՐԵՐԸ ԸՆՏ ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԻ ՄԻ ՓԱՍՏԱԹՂԹԻ

Թուրք-թաթարական հորդաների դարավոր ավերածության հետևանքով ամեն ինչ տակն ու վրա եղած Հայաստանի քաղաքական կազմակերպության շնչին բեկորները, ինչպես Հայտնի է, պահպանվեցին երկրի գժվարամատշելի լիոնաստաններում, Հատկապես Արցախում և մասամբ նաև Սյունիքում՝ մելիքություններ անվան տակ: Մելիքությունները, այդ փոքրիկ ու տեղական նշանակություն ունեցող իշխանությունները, ժամանակի մեծ պետությունների՝ Օսմանյան կայսրության ու Պարսկաստանի պայքարի բախտորոշման խնդրում իշարկե միայն շնչին գեր կարող էին կատարել: Մելիքությունների կարեոր նշանակությունն այն էր, որ նրանք կարողանում էին կազմակերպել տեղական բնակչությանը շրջապատի կիսաթափառական ու ավազակարար ցեղերի անընդհատ հարձակումների ու ավերածությունների դեմ: Իրենց ներքին կյանքում լինելով անկախ՝ նրանք ժողովրդին կառավարում էին Հայկական ու տեղական սովորութային օրենքների համաձայն, ժողովրդից ընտրված և իրենց կողմից հաստատված տանուտերերի միջոցով:

Ժողովրդի համար մեծագույն առավելություն էր և այն, որ պետական հարկերը գանձվում էին տեղական պաշտոնյաների ձեռքով, ազատ պետական հարկավաքների ոչ մի օրենք չճանաչող կեղեքումներից: Օտար, վայրենարար և վայրմնացնող տիրապետության հետևանքով շինարարական և մշակութային կյանքը հայոց աշխարհում մարելու աստիճանի էր հասած: Մելիքությունների սահմաններում, այնուամենայնիվ, նորոգումների և կարկատանների միջոցով պահպանվում էին ճարտարապետական կոթողները, պահպանվում էին տաղանդավոր հայ քարտործ վարպետների ավանդները խաչքարերի մանրարիֆատ գործերում, գրչության ուսմիջիրանները շալակած իրենց կիսատ ձեռագրերն ու կազմարները հանգրվան էին գտնում այդպիսի կիսանկախ վայրերում՝ շարունակելու հայ մտքի մարելու հասած առկայությունը: Խսկ օտարի կրնկի տուկ ձխլտված հայությունը, որի սրտի խորքում երբեք չէր մարել իր հայրենիքի ազատության գաղափարը, մելիքությունների մեջ տեսնում էր կայծը՝ իր հեռավոր հույսերի, և կարծես թե հենց իրենք մելիքներն էլ իրենց այդ գերի գիտակցությունն էին նշում հայրենասեր մելիք եղանի բերանով, որը իր նստավայր Տող գյուղի տան մուտքի շուրջ գրել տված ընդարձակ արձանագրությունը (դուռ քարրառով) վերջացնում է հետեւյալ խոսքերով:

ԵՍ ԹՈՂԵՑԻ ՈՉ ՀԱՅԵԱՍԴԱՆԱՍ ԵՍԻՐ ԳԱԼՈՒ

Հայկական լիոնաստանը իր անկախության փշրանք մելիքություններով այն իրական ուժն էր, որը Հիմք գարձավ ազատագրական նոր շարժումների, որոնց վերջարանը պիտի լիներ Դավիթ բեկի հերոսական գոտեմարտը:

Պատմագիտական ուսումնասիրությունների մեջ մեծ մասամբ նկատի են առնված Արցախի ու Սյունիքի մելիքությունները, որոնք ավելի զգալի դեր են կատարել քաղաքական առումով. բայց ժողովրդի ներքին կյանքի ուսումնասիրման համար կարևոր է նաև այլ տեղերի մելիքությունների պատմությունը:

Գեղարքունիքի մելիքական տոհմերից միայն մեկի, Շահնազարյանների մասին զգալի նյութեր կան մատենագրության մեջ, այդ պատճառով էլ այդ տոհմի պատմությունը դարձել է հատուկ ուսումնասիրության առարկա¹. Բայց Տաթևի վանքի ձեռագրերի մեջ պահպանվել է մի փաստաթուղթ, ըստ որի Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը 1513 թ. եկել են Տաթև, ծանոթացել ինչ որ ավելի հին փաստաթղթերի բովանդակությանը, որոնցով Գեղարքունիքը հաստատված է եղել այդ վանքի հոգեոր թեմ և իրենք կրկին վերահստատել են այդ հին վճիռը:

Ահա այս փաստաթուղթը.

«Թիվն ԶԿՅ (1513) էր. մեք Գեղարքունոյ մելիք ու տանուտերք եկայք ի սուրբ յաթոռս Բատաթէի Սիսնեաց ԲԺ-ն (12) զաւառ, ևս առաւել երկրին մեք Գեղամայ, որ ճշմարիտ երկիրն մեք Գեղարքունի թեմ և վիճակ է սուրբ առաքելոցս Բատաթէի, սուրբ առաքելոյն Բարթողիմէոսի հաստատած մինչև Լուսաւորիչն: Լուսաւորչէն որդոց և թոռանցն Սահակայ և Մեսրոբայ՝ մինչև այս ժամանակս, հաստատ և անխախտ: Մեք տեսնեալ, մեք հաւրէ և պատէ լսեալ՝ զամենայն հաս և իրաւոնք տայինք և հնազանդ ժողովուրդ էինք: Ապա զալս մեք յուխտ ի սուրբ աթոռս՝ զկոնդաքս տեսաք, մեք բերանով կարդացաք, մեք ականչաքաք և կրկին հաստատեցաք այս բանս, որ ճշմարիտ էր. յուխտ և զաշինք զրինք զրան սուրբ առաքելոցս և առաջի եսլիսկոպոսացս, Ծմաւոն եպիսկոպոսի և տէր Ստեփաննոսի և Մարտիրոս փակակալի և տէր Ղուկաս հայրապետին և այլ միաբանիցս, մեծի և փոքրու, ամէնի:

Ես Փիրհամզէս, որդի Եղիշին և թոռն մելիք Միրզին:

Ես Թանկրիզուլս, որդի Մէլիք Ղուկասին և թոռն Պուղիկին:

Ես Էջիէս, որդի Պուտախին, թոռն Տէլուզարտաշին (տարբերակներ՝ Էջիսէս, Էկիս):

Ես Թարխանս Քթայշինեցի (տարբերակն՝ Քթաշինեցի, Քիթաշինեցի):

Ես Շահուպաթս Գաւառնեցի, որդի Աստուծայտուրին, թոռն Միրանշին (տարբերակն՝ Շահ Ղուլաթ, Շահապաթ):

Ես Պաշարաթս Կոթեցի:

Ես Մաթիոս Կածեցի (տարբերակ՝ Մաթէոս):

Ես Այսմայկուլս Կնծուտեցի (տարբերակ՝ Գուլ Կնծուտեցի):

Ես Փիրի, որդի Ղուպաթին, թոռն Պէրամին (տարբերակն՝ Պիրամին, Բեհրամին):

Ես Կունդուղս Գանձակեցի (տարբերակ՝ Կունդուղ) եւ ամէնքն ամենայնի ուխտեցաք, որ ոչ մերմէ ոչ մեք ընդանեաց, ոչ զաւակաց, ոչ այլոց Գեղարքունեցայց, որ այս բանիս հակառակ չլինին. կամ հետ ի հաշէնեցայց, կամ երկրիս

¹ Ա ա բ ա պ ե տ եսլիսկոպոս, Գօֆեանք և Մելիք Շահնազարեանք. Նյութեր հաւմելիքութեան մասին, մասն Բ, էջմիածին, 1914. Շահնազարյաններին ճիշտ կլինի անվանել Առղքի մելիքներ, որովհետեւ Գեղարքունի զավառը կազմում էր ներկա Կամայի և Մարտունու շըրշանները, Սողոբ առանձին զավառ էր, որի մեջ մտնում են այժմյան Բասարգելարի շըրշանն ու մասամբ Կարմիրի շըրշանի զյուղեր:

եպիսկոպոսացն, կամ հետ կաթողիկոսացն միաբանին, Հակառակութիւն անէն հետ յաթոռիս, սևերես լինին Աստուծոյ և ի մարդկանէ և սուրբ յաթոռոյս անիծեալ. մեր և մեր նախնիացն մեղացն պարտական լիցին և Ռ. Ռ. (1000, 1000) նալաթ լիցին:

Մեք Գեղարքունոյ սարկաւագունքս, որ եկինք յաթոռս վասն կարգալոյ՝ այս բանիս վկայ ենք: Ես Մուսէս սարկաւագս, որդի Կոստանդին, թոռն Քաջանայի իրիցին: Ես Սարկաւագ, որդի Ամիրին, թոռն Միրզին, Կաթնուց գեղէն: Ես Եղիշէ սարկաւագ Դարանակուց, վկայ ենք, որ Գեղարքունոյ տանուտէրքն դայս բանս գրեցին, որ ճշմարիտ է Աստուծով. որոյ անսպառ շնորհքն ի վերայ թեմի և վիճակի իւրոյ Եղիշի. մանաւանդ այնց, որք չատագով լինին սրբոյ ուխտիս և յորդորող. որում երկրպագութիւն և փառք արարշին, ամէն»²:

Փաստաթուղթն սկսվում է «Թուականին ԶԿԲ (1513) էր. մեք Գեղարքունոյ մելիք ու տանուտէրքս» բառերով, բայց ստորագրությունների մեջ չի պարզվում դրանց յուրաքանչյուրի մելիք կամ տանուտեր լինելու հանգամանքը, անորոշ է նաև մեծ մասի տեղադրության հարցը: Այսպես ցանկի միայն առաջին երկուսն են իրենց կամ տոհմի համար գործածել մելիք տիտղոսը, իսկ մնացած ութի համար ոչ մի բնորոշում չկա. միայն հինգ ստորագրող են հիշատակել իրենց դյուզերի անունները, բայց դրանք էլ հին հայկական տեղանուններն են, որոնց մեծ մասն այժմ մոռացված է: Ըստ երեսութիւն այս անորոշության պատճառով էլ պատմագիտության մեջ ցանկը քիչ ուշադրության է արժանացել, մանավանդ, որ գրականության միջոցով ստորագրողների հասարակական դիրքը և տեղը ստուգել հնարավոր չի եղել:

Բարերախտաբար այժմ մեր ձեռքի տակ ունենք ամբողջ Գեղարքունիքի արձանագրական նյութերը, որոնք հավաքել ենք տարիներ տևած գիտարշավ-ների ընթացքում: Մրանք հնարավորություն են ընձեռում այս ցանկի անձնավորությունների մեծ մասի ոչ միայն հասարակական դիրքն ու տեղադրությունը

2 Այս ընդօրինակությունը կատարել ենք Մաշտոցյան մաւանագարանի № 6271 ձեռագրի 6, 6ր և 7ա էջերից. 6ր էջի լուսանցքում կա նաև հետեւյալ հավելումը, զրկած երկու տողով, վերից վար, որի վերջավորությունը անկյունին մոտ լինելով՝ զնշվել է.

«Ես Համզա Աննեղեցի, որդի Ամիրվէ...»

բռն ձան...

Խոյն ձեռագրի 7ա էջի վրա փաստաթղթի անմիջական ներքնում փակցված թղթի վրա կա Գեղարքունյաց տանուտերների կողմից հաստատված մի այլ փաստաթուղթ՝ Խոյն 1513 թվականից, որի մեջ կան հետեւյալ անունները.

«Ես Համզա, ես Խոյիս, ես Թարխանս, ես Մատրէսս, ես Ասմանզիլս, ես Թաշարարս, ես Փիրումս, ես Փիրնամզէս, ես Կունդուզ, ես Աղարարս, ես Շաղուրարս, ես Անի. այս զիւս զրեցի Տէլուշ, Արտաշի ուղի....»

Խոյն համաձայնագիր-կոնդակը հաստատված է նաև 1519 թվականին Միրզանին որդի Տէր-Մելիքսեթի կողմից:

Նշված ձեռագրից բացի այս փաստաթուղթը կա նաև հետեւյալ երեք ձեռագրերում. № 1488, 4ա, 4բ, № 2869, 3ա—4բ, № 2924, 3ա—4ա: Այս բոլորի մեջ տարբերությունները միայն աննշան-ուղղագրական են: Ներկա դեպքում կարենոր անունների տարբերակները, որոնք նշանակել ենք բնագրի մեջ, եղած հրատարակություններից են, որոնց մի մասը այլ ձեռագրերից արտագրված լինելու հետեւյալ է, մի մասն էլ հրատարակիչների սխալմունք: Համեմատիր Հ. Շահ Համաթ թու ն ե ա ն ց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ դաւառացն Արարատայ. II, էջ 257—259, էջմիածն, 1842: Դ. Ա. ի շ 2 ա ն, Սիսական, էջ 34. Վենետիկ, 1893: Մ. Մ բ ա տ յ ա ն ց, Տեղագիր Գեղարքունիք ծովաղարդ գաւառի, էջ 581—582, Վաղարշապատ, 1895: Ա. Ա բ բ ա հ ա մ յ ա ն, Ժամանակագրութիւն Ստեփանեսոսի Օրբելիանի, էջ 45:

որոշել, այլև ցեղաբանությունն և ուրիշ մանրամասնություններ պարզել, որը և ներկա հոգվածի միակ նպատակն է:

Բայց այդ քննությանն անցնելոց առաջ նշենք, որ փաստաթուղթը գրվելուց 19 տարի հետո, այն է 1532 թ., Գեղաբօւնիքի մի խումբ իշխողներ կրկին այցելել են Տաթևի վանքը և Մազրայից մինչև Կոթ եղած բոլոր գյուղերի վրա պայման դրել, որ ամեն գյուղ տարեկան երկու կապալ ձեթ տա վանքին. այդ առթիվ վանքի Գրիգոր Լուսավորիչ կոչվող եկեղեցու պատի վրա փորագրել են Համապատասխան արձանագրություն, որը տարաբախտաբար ժամանակի ընթացքում շատ վնասվել է, պահպանված մասերից հնարավոր է լինում կազմել ստորագրողների հետեւյլ ցանկը.

1. Մելիք Թանգրգուլ Փառկուն....
2. Մաթիոս Բայրական Կածեց....
3. Հստեփանոս Կոթայ
4. Ղուլիկն ԳետկաՅ:

1. ՓիրՀԱՄՁԵ, ՈՐԴԻ ԵՂԻՇԻՆ, ԹՈՒՆ ՄԵԼԻՔ ՄԻՐԶԻՆ

Վավերագրի մեջ Հիշատակված առաջին անունն է Փիրհամզէ, որդի Եղիշին և թոռն մելիք Միրզին, որի նստոցը կամ գյուղանունը չի հիշատակված, բայց մտսամբ նախկինում Հրատարակված, ապա նաև մեր Հավաքած արձանագրական նյութերի հիման վրա ճշտորեն որոշվում է նրա նստավայր գյուղի տեղը: Դա Կամո (Նոր Բայազետ) քաղաքից մոտ 2 կիլոմետր դեպի Հարավարենելք գտնվող Ղուլալի գյուղն է (այժմ Կարմիր): Այստեղ պահպանված մի քանի հուշարձանների վրա մնացած արձանագրությունները և՝ այդ են Հաստատում և՛, նաև, որոշ տեղեկություններ ավելացնում նրա ազգատոհմի մասին:

Գյուղի մեջ մնում են մի հին և ավերակ եկեղեցու պատերի մասեր³, որի մոտ նաև մի քանի խաչքարեր և տապանաքարեր, որոնցից մի քանիսը պատկանում են Փիրհամզայի գերդաստանին: Դրանցից առաջինը մի գեղաքանդակ խաչքար է, որի ճակատին քանդակված է թետարած արծիվ, ճանկերում բռնած զառ, արծիվի երկու կողմերում մեկական սրբապատկերներ են. խաչքարն ունի լայն շրջանակներ, որոնք բաժանված են Հատվածների և գրանց վրա ձևավորված են ութիսանի աստղեր, զնդանե զարդեր և առասպելական կենդանիներ, որոնցից մի քանիսը մարդագլուխ: Կենտրոնում խորագիր խորանի մեջ խաչ է, իսկ խորանը եղերող թեք (գեղի ներս) և նեղ շրջանակի վրա ուսուցիկ տակում՝ հետեւյալ վնասված արձանագրությունը:

[ԹՎ: ԶՊ: (1505) ԵՍ ՄԵԼԻՔ]Ք ՀԱՄՁԵՍ ՈՐԴԻ:.....

ԴԱԳՈՒՆԾ ԵՒ ՆԿԱՐԵԼ ԶԽԱՉԱՅ, ՈՐՔ ԿԱՐԴԱՅ[Ա.3]Ք ՅԻՇԵՑ[Ք]⁴:

³ Ե. Լ. ալ ալ ան, Աղդագրական հանդես, 9, էջ 141—143, Գիւլան, II, 27:

⁴ Այդ եկեղեցին շատ վաղուց է ավերված, գետես Շահիսաթունյանցը 1842 թվին հիշատակում է միայն խաչքարերը: Հնում այդ եկեղեցին կոչվել է Ս. Գևորգ, այժմ վայրը կոչվում է «Խաչեր»:

⁵ Խնազիս այս, նույնազիս և հետազա բոլոր բնագրերի մեջ շարդված մասերի վերականգնումները առնված են սովորական փակադների մեջ, նաև թվականների տառային արժեքները արարականի վերածված թվանշանները, իսկ բնադրի մեջ եղած դմիար հասկանալի սղումների լրացումները անկունավոր փակադների մեջ: Այն արձանագրությունները, որոնց համար ազբյուր լի նըշված՝ հրատարակվում են առաջին անգամ:

Նույն խաչքարի հարավային նեղ կողքին փորապրված է նաև հետեւյալը.
ԵԱ ԳՐ[Ե]Գ[Ո]ՐԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԿԱՐԵՑԻ ԶԼԱԶՍ Ի ԽՆԴՐՈ
ՓԻՐՀԱՄԳԻՆ Ի ՓՐԱՌԻԹԻՆ ՀՈՎՈ ՈՐԴՈՅ ԻՒՐՈ ԶԱՒՃՐԱՊԻՆ:

Մանորուրաններ, 1. Թվականի հարյուրավորը պակասում է, այն վնասված է չի, այդ մասում բավական բաց տեղ զատարի է թողնված. ինչպես այժմ, այնպես էլ հնում սովորություն է եղել ոչ միայն խոսակցության, այլև գրելու ժամանակ երբեմն հաղարավորն ու հարյուրավորը շրբել, ենթադրելով, որ հատկանալի է: Հատկապես Գեղարքունիքում թվականի գրոթյան նման ձե հաճախ է հանդիպում:

2. Առդի բարից հետո բավական մեծ տեղ չարդումած է շատ հնուց և տառերն անորոշ են-հրատարակիչները յուրովի և տարբեր ձևերով են վերականգնել արձանագրության այդ մասը:

3. Բոլոր հրատարակիչները թվականի բաց մասում Ծ (1000) են ավելացրել, որը սիալ է:

4. Հրատարակիչները արձանագրության երկու մասերը միացրել են խառնիխուն ձևով:

Փիրհամզայի անունը կրող երկրորդ հուշարձանը նախորդից մի հինգ քայլ արհմուտք է և կանգնած է հասարակ պատից ներս, կարտոֆիլի ածուների մեջ:
Դա մի պարզ քանդակներով խաչքար է, որի հարավային կողքին 8 տողով զրված է.

ԵԱ ՓԻՐՀԱՄԳԻՆ ԿԱՆԿԱՆԵՑԻ ԱԲ. ԽԱԶԱՎՈՒ ՅԻՇԱՎՏԱԿԻ ՇՆԱԽՊԱՅ ԻՄՈՅ.

Տեղագրական գրականության մեջ Փիրհամզայի անունը պարունակող մի երրորդ հուշարձան էլ է հիշատակված այս գյուղում, որը մենք չկարողացանք գտնել. դա եղել է գյուղի հյուսիս արևելյան կողմի բարձունքի վրա գտնվող ու վահան մատուի պատի մեջ ազուցված խաչքար, որի վրա գրված է եղել.

Ի թվ: ԶՄԴ: (1505) ԵԱ ՓԻՐՀԱՄԳԻՆ ԵՂԲԱՅՐ ՅԱՍԱԳՇԵՍ ԿԱՆԳԱՆԵՑԻ ԶԼԱԶՍ ԲԱՐԵԿԱՆԻ ԵՇԽԱՆԵՑ:

Կարծում ենք, որ այս խաչքարը նախապես սիստի կանգնած լիներ նախորդների մոտ, Մելիք Փիրհամզայի տոհմական զերեզմանոցում և հիշատակված «իշխանն» էլ Փիրհամզան է:

Մելիք Փիրհամզայի անունը կրող մի որմնաքար էլ գտնվելիս է եղել հարկան Փաշարենդ (այժմ Հացառատ) գյուղի եկեղեցու պատի տակ, որը ներկայումս չկա, և որի վրա գրված է եղել.

ԿԱՄԱԿԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՏԱՏԼՈՒՂԱՆՍ, ԴԱՒՏԾ ՊԱՐՈՆ ԴԱՎԹԻՆ, ԿԵՆԱԿԻՑ
ՓԻՐՀԱՄԳԱՅ ԱՂԻՆ, ՈՐ ՆՈՐՈԳԵՑԻ ՇՐՋԱՊԱՏ ԱԲ. ԳՐԻԳՈՐԻՍ, ՅԻՇԱՎՏԱԿԻ
ՀՈՎԻՌՅ ԻՄՈՅ: ԶՊԸ: (1549)⁶:

Փիրհամզայի ազգատոհմի մասին ուղղակի հիշատակությունները սրանով վերջանում են, բայց կան այլ հուշարձաններ և արձանագրական փաստեր, որոնք անկասկած կապված են նրա տոհմի հետ: Այսպես՝ ինչպես հին ֆեոդալական, այնպես էլ վերջին դարերի մելիքական տներն ունեցել են իրենց տոհմական զերեզմանոցը և հաճախ՝ իրենց տիրութիւնը որեւէ եկեղեցում ու նրա բա-

⁶ Հրատարակված է Հ. Շահ Համբարձում («Հայութեան պատմութեան կամաց համարական պատմութեան մասին», Եղիշեան, 18, էջ 241 (այսուհետեւ՝ Հ. Շահ Համբարձում և նախական, էջ 50 (այսուհետեւ՝ Աղիշան)): Մ. Սմբատ անց («Գեղարքունիք», էջ 494 (այսուհետեւ՝ Մ. Սմբատ անց)): Ե. Լալաջան, «Աղարքական հանդիս», 18-րդ հա., էջ 135:

⁷ Մ. Սմբատ անց («Հայութեան պատմութեան մասին», էջ 499): «Աղարքական հանդիս», 18, էջ 135:

⁸ Նույն աեզրում:

կում. մենք համոզված ենք, որ Ղուկալի գյուղի ավերակ եկեղեցու բակը եղել է Փիրհամզայի տոհմի գերեզմանոցը (թեև չի բացառվում և այն, որ այստեղ կարող էին և ուրիշներին թաղել): Արդ, հենց այստեղ նույն ժամանակներին վերաբերող մի քանի տապանաքարերն էլ կան հասարակության վերնախավին պատկանող մակղիբներով, որոնք անշուշտ Փիրհամզայի տոհմին են վերաբերում:

Դրանցից նշանավորները հետեւալներն են.

Փիրհամզայի կանգնեցրած խաչքարից փոքր ինչ հեռու, դեպի հարավ կանգնած է մի գեղաքանդակ խաչքար, ըստ ճակատի արձանագրության կանգնեցված է Մելիք աղայի և իր ծնողների հիշատակին 1549 թվականին:

Փիրհամզայի խաչքարից փոքր ինչ դեպի հյուսիս, նույն շարքում կանգնած մի գեղաքանդակ խաչքարի հյուսիսային կողի արձանագրությունից պարզվում է, որ այն կանգնեցրել է Արագշա աղան (իսկ ճակատին գրված է Արագշա իշխան):

Սրանցից բացի կան մի երկու եղծված արձանագրությամբ խաչքարեր էլ, որոնց թվականներն են ԶԾԳ և ԶԾԱ:

Այս փաստերի հիման վրա կարելի է եղբակացնել.

1. Մելիք Փիրհամզայի ընակավայրը և տիրութը եղել է ներկայիս Կամոյի շրջանի Կարմիր գյուղը (Ղուկալի) և նրա տոհմի գերեզմանոցն էլ՝ այժմ ավերակ եկեղեցու բակը:

2. Տաթեի փաստաթղթի մեջ անորոշ է Փիրհամզայի մելիք թե տանուտեր լինելը, բայց արձանագրությունների մեջ նրա համար գործածված են մելիք, իշխան և աղա տիտղոսները: Պետք է ենթադրել, որ նրա իսկական կոչումը մելիք է, մանավանդ, որ Տաթեի փաստաթղթում էլ նրա անունը առաջին տեղն է գրավում և թոռն է մելիք Միրզայի:

3. Գյուղի հին հայկական անունը եղած նյութերով վերականգնել հնարավոր չէ այժմ, միայն հիշատակենք, որ ձեռագրական մի հիշատակարանում, գրված 1664 թվականին, գյուղը կոչվել է Ղուկալի. — «Գրեցաւ... ի յերկիրս Գեղամայ» ի գեաւղս որ կոչի Ղուկալի»⁹:

Մելիք Փիրհամզայի առնշությամբ պիտի քննենք գրականության մեջ արտահայտված մի կարծիք. Կարապետ եպիսկոպոսը իր «Թօփեանք և Մելիք-Շահնազարեանք» աշխատության մեջ փորձում է հիմնավորել այն տեսակեար, որ Գեղարքունիքի բոլոր վայրերի մելիքները սերում են Մելիք-Շահնազարյաններից, իսկ սրանը էլ իրենց հերթին Դոփյան իշխաններից: Այս տեսանկյունից քննելով նաև Փիրհամզայի ծննդարանությունը, Կարապետ եպիսկոպոսը նրա պատ Մելիք Միրզային նույնացնում է Վանեանի վանքի մեջ գտնվող մի խաչքարի 1502 թ. արձանագրության մեջ հիշատակված մելիք Միրզայի հետ, իսկ իրեն՝ մելիք Փիրհամզային՝ Բասարդեշարի Մեծ Մազրա գյուղի մի խաչքարի 1539 թ. արձանագրության հիշատակած Փիրհամզայի հետ¹⁰:

Ներկա աշխատության նպատակից դուրս լինելով Գեղարքունիքի մելիք-ների աղքակցական կապի խնդիրը՝ խորամուխ շենք լինելու այդ հարցի մեջ: Միայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ Կարապետ եպիսկոպոսի կարծիքը հիմնված է երկու խախուս նախադրյալների վրա. ա) որովհետև XIII դարում

9 Ն. Ման, Ցուցակ համառօտ ձեռագրաց վանուց Սևանայ, Մոսկվա, 1892, էջ 12:

10 Մ. Սարատչանց, էջ 567: Ղ. Ալիշան, էջ 62: Կարապետ եպիսկոպոսի կարծիքը հայութեանք և Մելիք-Շահնազարյանք, էջ 99:

Սոդ գավառը (Ներկայիս Բասարգելարի շրջան) մտնում էր Շարա գավառի տեր Դոփյան իշխանների տիրույթի մեջ, ապա Հետագայում էլ պետք է, որ այն Դոփյանների սերունդ Մելիք Շահնազարյանների տիրույթը լիներ, այդ տոհմի ճյուղավորումներով: բ) Ինչպես Փիրհամզա, այնպես էլ Գեղարքունիքի այլ մելիքների անձնանուններ հանդիպում են Մելիք-Շահնազարյանների տոհմի մեջ: Առաջին կետի վերաբերյալ պիտի ասենք որ, ինչպես և ինքը Կարապետ Եղիսկոպոսն էլ գրում է, Դոփյանների իշխանությունը տարածվել է մինչև Շողագա վանքը, այսինքն Մարտունիի շրջանը ամբողջովին, իսկ Կամոցի շրջանը (Նոր Բայազետ) դրանից դուրս է, իսկ Մելիք Փիրհամզայի նստավայր գյուղը Կամոցի շրջանի մեջ է: Երկրորդ, անձնանունների նույնությունը տարրեր տոհմների մեջ շատ սովորական երեսությ է և ընդհանրապես ամենախախուս կովանն է պատմական եղբակացություններ անելու համար, երբ այդ շի զուգորդվում կոնկրետ պատմական շրջանի համար՝ տեղի և տարածության հետ: Այսպես Փիրհամզայի նստոց Ղուկալի գյուղում եղած արձանագրությունների մեջ հիշվում են մելիք Փիրհամզան, եղբայրը՝ Յոսապշահ, կինը՝ Տաւուղան և միակ որդին՝ Զոհրապ, իսկ Մաղրայի արձանագրությունը, որը Կարապետ Եղիսկոպոսի գլխավոր կովանն է, ունի հետեւյալ բովանդակությունը և անձնանունները.

(ԱՍՏՈՒԾՈՎ ՄԵՔ) ԵՂԲԱՐՔՍ ՍԱՏԻՍ, ԵՂԻՇԱՅ ՔԱՀԱՆԱՍ, ԿՈՍՏԱՆՏ, ԱՂ(ԱԲԷԿԻ), ՈՐԴԻՔ ՓԻՐՀԱՄԶԱԻՆ ԿԱՆԿՆԵՑԱՋ ԽԱԶԵԲ[Ա]

Բ[Ա]ՐԵԼԱՒԻՍ ՄՆՈՂԱՅ ՄԵՐ. ԹՎ: ԶԶԲ: (1539)¹¹:

Սրան մենք կարող ենք ավելացնել նախորդի մոտ գտնվող և նրա հետ կապված նաև հետեւյալ արձանագրությունը, որը տապանաքարի վրա է:

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ՓԻՐՀԱՄԶԱՅ ԱՂԻՆ...¹²

Ինչպես պարզ երևում է, նախ, մելիք Փիրհամզայի գերդաստանի Ղուկաւում՝ նրա նստոցում, պահպանված անձնանունների և Մեծ Մաղրայի արձանագրության մեջ հիշատակվածների մեջ նույնությունը չնշին է, և ապա Մաղրայի Փիրհամզան թաղված է եղել հենց Մաղրայում:

Կարապետ Եղիսկոպոսի կարծիքը անհավանական համարելով՝ Մաղրայի և Վանեվանի արձանագրությունների մեջ հիշատակված անունները չենք մտցնում մելիք Փիրհամզայի ստորև գծվող տոհմածառի մեջ:

4. Փիրհամզայի ստուգվող տոհմածառը¹³.

ՄԵԼԻՔ ՄԻՐԶԱ, 1505, 1513

ԵՊԻԾԵ

ՓԻՐՀԱՄԶԱ-ԿԻՆ ՏԱՏՈՒԹԱՆ, 1549: ՅՈՍԱԳՇԱՀ + 1505

ԶՈՀՐԱՊ, 1505

¹¹ Հրատարակված է սխալ դասավորումով՝ Մ. Ամրատյանց, էջ 608. «Աղդապրական հանդես», 19, էջ 21:

¹² Այս տապանաքարը, ինչպես և խաչքարը օդտագործված են որպես շինանյութ Մեծ Մաղրայուղի ծայրի մի հասարակ ու հանաշեն, այժմ կիսավեր եկեղեցու մուտքը ձևավորելու համար:

¹³ Այս և հետագա տոհմածառների մեջ սկզբից խաչ ունեցող թվերը ցույց են տալիս մահվան ժամանակը, իսկ մյուս, կամ ստորակետով բաժանված թվերը՝ հիշատակության ժամանակները:

Համարելով Փիրճամզայի պատ՝ մելիք Միրզային՝ առնվազն 50 տարով իրենից առաջ, կարելի է հավանական համարել, որ այս տոհմն սկսվել է XV դարի երկրորդ կեսի սկզբներից, իսկ թվագրված վերջին արձանագրությունը՝ Տառլուղանինը՝ 1549 թ., որով առնվազն մեկ տմբողջ դար այս տոհմը վարել է, մելիքական իշխանություն:

2. ԹԱՆԿԻՐԻՂՈՒԵԼԻ, ՈՐԴԻ ՄԵԼԻՔ ՂՈՒԿԱՍԻՆ, ԹՈՌԵ ՊՈՒՂՋԻԿԻՆ¹⁴

Տաթևի վավերադրի մեջ երկրորդ տեղը գրավող այս մարդու տիտղոսը և տիրութի ճիշտ տեղը նույնպես չի հիշատակված: Մեր գիտարշավների և գրանց ժամանակ հավաքած արձանագրությունների հիման վրա այժմ այդ երկու խրնդիրներն ել փաստերով ճշտվում են:

Մարտունու շրջանի այժմյան Ծովինար զյուղը երկու-երեք տասնամյակ առաջ կոչվում էր ներքին Քյոլաղրան, իսկ գրանից 4—5 կմ հարավ, բարձրադիր սարավանդի վրա գտնվող զյուղատեղի ավերակները՝ վերին Քյոլաղրան: Այս զյուղատեղի մեջ պահպանվել են մի հասարակ եկեղեցի, մի մեծ զերեզմանատուն՝ եկեղեցուն կից հյուսիսից, մեկ ուրիշ ավելի փոքրը գեղի հարավ-արեելք, ապա տարբեր տեղերում առանձնակի կամ փոքր խմբերով խաչքարեր: Թված այս հուշարձանների վրա էլ հանգիստեցինք բազմաթիվ առայօր շհրատարակված արձանագրությունների, կապված մելիք Թանգրիդուլու և նրա տոհմի այլ անդամների հետ:

Եկեղեցու հյուսիս արևմայան անկյունի մոտ, մի շաբթով և իրար կից, կանգնած են երեք զեղարանդակ խաչքարեր, որոնցից հարավայինը առանձին պատվանդանի վրա, իսկ մյուսները՝ միևնույն: Նույն պատվանդանի վրա կանգնածներից հյուսիսայինի քիվին, հյուսիսային կողին և շրջանակի վերին մասում զրված է.

Թվ. Զ: (1451) ԵԱ ՄԵԼԻՔ ԹԱՆԿԻՐԻՂՈՒԵԼՍ, ՈՐԴԻ ՄԵԼԻՔ ՂՈՒԿԱՍԻՆ, ԹՈՌԵ ԱՂԲՈՒԴԻՆ, ԿԱՆԿԱՆԵՑԻ ԽԱՉԱ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՅ ԻՄՈՅ:

Նույն պատվանդանի վրա և նրան հարակից կանգնածի քիվին մեկ, և տակի մասում՝ չորս (ընդամենը հինգ) տողով զրված է.

ԵԱ ՄԵԼԻՔ ԹԱՆԿԻՐԻՂՈՒԵԼՍ, ԿԱՆԿԱՆԵՑԻ ՍԲ. ԽԱՉԱ Ի ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳՈՅ ՊԱՐՈՆ ԽՈՆՇԱՏԻՆ, ՈՐ Է ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԵՒ ԳՈՒՍՏՐ ՄԵԼԻՔ ԽՈՒՏՍԱՅԲԱԽԵՆ ԹՎԱ: ԶՓԱ: (1466):

Այս խաչքարերի շրջապատը Մելիք Թանկրիդուլու բնտանեկան գերեզմանոցն է, տապանագիր ունեցող գերեզմանաքարերը հետեւյալներն են.

Տապանաբար, օրորոցածն, հարավային կողին հեծյալ, որը նիզակով շամփրել է վիշապին, ապա մի եղ, որի թիկունքը կրծուտում է առյուծը, իսկ շրջանակներին զրված է.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՄ ՊԱՐՈՆ ՂԱՍՈՒՄԻՆ, ՈՐԴԻ ՄԵԼԻՔ ԹԱՆԿԻՐԻՂՈՒԵԼԻՆ, ԹՈՌԵ ՄԵԼԻՔ ՂՈՒԿԱՍԻՆ, ՈՐ Ի: Ե: (5) [ԱՄԵԱՅ] ՓՈԽԵՑԱԿ Ի ՔՍ. ԹՎԱ: ԶԳԵ: (1536):

14 Հ, Աճառյանը այս Պուղիկ անունը համարում է Պողոսի փաղաքշականը (տե՛ս «Անձնանունների բառարան», Դ, էջ 268), մինչդեռ տեղական արձանագրությունից պարզվում է, որ Աղբուղական կրնատ ձևն է:

Տապանաբար, օրորոցածե, հարավային կողին հեծյալ, վիշտալ և ցուլին հո-
շուող առյուծ, իսկ շրջանակներին՝

ԱՅՍ է ՀԱՆԳԻՍ ՊԱՐՈՆ ԼԵԼԵՃԱՆԻՆ, ՈՐԴԻ ՄԵԼԻՔ ԹԱՆԴՐԻՊՈՒԼԻՆ, ԹՈՌՆ
ՄԵԼԻՔ ՂՈՒԿԱՍԻՆ, ՈՐ Լ: (30) ԱՄՅԱ. ՓՈԽԵՑԱ.Ի Ի ՔՍ. ԱՅՍ: Բ: (2) ԵՂԲԱՐՍ
ՄՈՀՅՈՎ ՄԵՌԱՆ. ԹՎ: ԶԶԵ: (1536):

Տապանաբար, օրորոցածե, հարավային կողին խնջույքի տեսարան, իսկ
արևելյան ճակատին 6 կարճ տողերով՝

ԹՎ: ԶԴ: (1541) ԱՅՍ է ՀԱՆԳԻՍ ՄԵԼԻՔ ԱԻԱՆԴՈՒԿԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ՄԵԼԻՔ
ԹԱՆԴՐԻՊՈՒԼԻՆ:

Տապանաբար, օրորոցածե, հարավային կողին ննջեցյալ, որի առջև գրված
է երկու գավ և հաց, արևելյան ճակատին 6 կարճ տողերով.

ԱՅՍ է ՀԱՆԳԻՍ ՄԵԼԻՔ ՊԱՊԱՃԱՆԻՆ, ՈՐԴԻ ՄԵԼԻՔ ԹԱՆԿՐՊՈՒԼԻՆ. ԹՎ:
ԹԻ: (1578):

Քանկրիդովու և կնոջ խաչքարերին կից՝ հարավից, կանգնած է մի զեղա-
քանդակ խաչքար, ըստ երևույթին մելիք Պապաջանի կնոջ հիշատակին, որի
քիվին, թերթի արանքում և հարավային կողին գրված է.

ԵԱ ՊԱՐՈՆ ՊԱՊԱՋԱՆՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱԶՍ ԳԱԻԳԱԼ ԱՂԻՆ. ԹՎ: ԶՂԹ: (1550):

Տապանաբար, մեծ օրորոցածե, հարավային կողին թամբած ձի, որի սան-
ձից բռնել է մի պատանի. կենտրոնում պառկած ննջեցյալ, որոնց շուրջը 40
լար ունեցող քանոն, մկրատ, դաշույն, գավ և հաց, արևելյան և արևմտյան
ճակատներին 9 կարճ տողերով.

ԱՅՍ է ՀԱՆԳԻՍ ՂԱՍՊԻՄՃԱՆԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ԲԱԲԱՃԱՆԻՆ, ԵՂԲԱՐ ԱԳԻ-
ՔԵԿԻՆ: Ա: ԱՄԱՅ ԹԱԳԱԻՌԻՆ, ՀԱՆԳԱ.Ի Ի ՔՍ. ԹՎ: ԹԻ: (1571):

Կերեզմանատնից գեպի հյուսիս 150 մետր հեռու առանձնակի զտնվում է
մելիք Թանկրիդովու եղբոր ընտանիքի գերեզմանոցը, որի կենտրոնում կա մի
մեծ և օրորոցածե տապանաքար. հյուսիսային կողին թամբած ձի, որի սան-
ձից բռնել է մի պատանի՝ ձախ ձեռքում ունենալով երկփողանի սրինդ. առջեր
կերակուրի պնակ, հաց և երկու գավ ու մկրատ, քիչ հեռու սաղ նվազող. տա-
պանագիրն սկսվում է հարավային կողից և վերջանում է հյուսիսայինի վրա.

ԱՅՍ է ՀԱՆԳԻՍ ՄԵԼԻՔՊԵԿԻՆ, ՈՐԴԻ ՂՈՒԿԱՍ ԱՂԻՆ, ԵՂԲԱՐ ՄԵԼԻՔ ԹԱՆ-
ԿՐԻՊՈՒԼԻՆ, ՈՐ ԵՐԵՍՆԱՄԵՍՅ ՓՈԽԵՑՈ: Ի ՔՍ. ԵԹՈՂ ՍՈՒՔ ԱՆՄԻՒԹԱՐ,
ԹՎ: ԶԶ. (1457):

Սրու մոտ կանգնած են երեք խաչքարեր, որոնց վրա հիշատակված են
Ապով, Ղազար, Բեկի Սովորան և Բաղալ անունները, և միայն մեկ թվական՝ ՌԺԹ
(1570), տուանց հոր կամ պապի անվան, այդ պատճառով էլ միայն իրենց ա-
ռանձնակի խումբ լինելու հետեանքով ենք ենթադրում, որ Մելիքպէկի ժառանգ-
ներն են:

Այս տոհմի հետ առնչվող մի խաչքար էլ օգտագործված է որպես շինա-
նյութ նույն տեղի եկեղեցու հյուսիսային պատի մեջ, ներքուստ, այն գրված է
կողքանց, ճակատի մասը հարթված, որով և եղած արձանագրության սկիզբը
ոշնչացված է. ստորին մասում մնացել է թերթի հետևյալը՝

... և 200 իմ Ղարեան Աղին: Կ: (60) ՏԱՐ[Ի] ՄԵԼԻՔ[ՈՒ]ԹԻՒՆ ԱՐԱՐ թվ. : ՁՀ: (1521):

Անշուշտ անունով, տիտղոսով և տեղով կապվում է մելիքական այս տոհմի հետ, բայց թվականը չի համընկնում այս տոհմական շարքին. Կթե հիշատակված Ղուկասը Թանկրիզուլիի հայրն է, ապա՝ նա չէր կարող մինչև 1521 թվականը կենդանի լինել ու մելիքություն անել, որովհետև Թանկրիզուլին արդեն 1451 թվականի արձանագրության մեջ իրեն մելիք է կոչում և 1466 թվականին կնոջ և մահացած հինգ տարեկան գավառի Ղասումի համար խաչքարեր կանգնեցնում, ասել է առնվազն 25 տարեկան պիտի եղած լիներ (ուրեմն ծրնված մոտ 1425 թ.), Տաթեի փաստաթուղթն ստորագրել է 1513, իսկ արձանագրությունը 1532 թ., որով գրեթե մի ամրող դար է ապրել:

Այս մելիք Ղուկասը Թանկրիզուլիի եղբայր ևս չի կարող լինել, որովհետև նախ՝ հայոց մեջ հորն ու որդուն նույն անունը տալու սովորություն չկա և ապա Թանկրիզուլիին հաջորդել են իր որդիները՝ մելիք Աւանտուկը և մելիք Պապանը: Մնում է հավատալ, որ դա Թանկրիզուլիի հայր մելիք Ղուկասն է, որի մահվանից շատ հետո, նրա ժառանգները խաչքար են կանգնեցրել իրենց հոր հիշատակին և այդ վերջին դեպքի տարեթիվը հիշատակել*:

Մեջ բերված գրավոր այս փաստերը հաստատում են, որ Աղբուղայան կամ կրծատ Պուղիկյան մելիքական այս տոհմը տիրել է ժառանգաբար 5 սերունդների ընթացքում. վերջին մելիքը Պապանանն է՝ վախճանված 1578 թ.: Սրա երկու հայտնի որդիների համար արդեն մելիք տիտղոսը չի գործածված և չէր էլ կարող գործածվել, որովհետև նրանք վախճանվել են իրենց հոր կենդանության ժամանակ: Բայց թվում է հնարավոր է ճշտել, թե ե՞րբ է այս տոհմին տրվել մելիքական իշխանություն: Տոհմի նախահոր, Աղբուղայի կամ Պուղիկի համար ո՛չ Տաթեի փաստաթղթի և ո՛չ էլ արձանագրությունների մեջ մելիք կոչումը չկա, այն գործ է ածված միայն վերջինիս հաջորդ Ղուկասի համար, իսկ Ղուկասի անունը կրող վերը բերված արձանագրության մեջ ասված է, որ նա ու (60) տարի մելիքութիւն արարու: Այս խոսքներից կարելի է եղբակացնել, որ հենց Ղուկասն է տոհմից առաջինը, որ ստացել է մելիք տիտղոսը, որը հետո դարձել է ժառանգական. տոհմի տեսղության վերջին մեր ունեցած թվականը՝ մելիք Պապաջանի մահվան տարին է (1578 թ.): Հնարավոր թվականը մեր ա-

* Տպագրության ընթացքում հանդիպեցինք մի փաստի ևս կապված Մելիք Ղուկասի անվան և տոհմի հետ, դա Մար պատրիարք եղած մի խաչքարի վրայի արձանագրություն է, որը հրատարակել է Մ. Բարխունյառյանը, բայց տողերը խառնած, վերադասավորելուց հետո արձանագրությունն ստանում է հետեւալ տեսքը.

Քրիստո Աստուած. նշան բարեխառ Դավարին,
Աստուծով ևս Դավարս, ի տանէն Գեղամայ, զուսար
Մելիք Ղուկասին, ամուսին, իմ մեծ իշխան Միջազան,
ուղիիս իմ Տափա քել, Մելիք պէկի կանգնեցինք
զիաշա փրկուրին նողոյ, թվ.: ԶՎԲ: (1549):

Մելիք Ղուկասի աղջիկը, ուրեմն, հարսնացել է Մարի մելիքների տանը: Մելիքական այս տոհմը Արցախի Հնարավոր իշխանների՝ Վաղթանկյանների շառավիղներից է. այս մելիքների տոհմը, շինված հին իշխանական տան մնացորդների վրա, այժմ էլ կանգուն է. շինված է շորս միապաղ քարե սյուների վրա, որոնք ունեն սրբատաշ և ձեավորված հիմքեր և խոյակներ. Ժամկիված է փայտաշնն, զարադամ-հաղարաշնն տիսի: Եղած արձանագրության համաձայն, շինված է 1658 թվին:

ուացին արձանագրությունն է, որը վերաբերում է մելիք Թանկրիզուլուն (1451թ.), բայց այդտեղ նա արդեն իրեն մելիք է կոչում. այդ կնշանակի, որ գոնե 25—30 տարեկան պիտի եղած լինի: Եթե ընդունենք, որ հենց այդ թվին էլ վախճանվել է նրա հայրը՝ մելիք Դուկասը, որը 60 տարի մելիքություն է արել՝ և մի 25 տարի էլ դնենք վերջինիս հոր՝ Աղքուղալի այս կամ այն ափազոսով իշխանություն վարած լինելը, ապա այս տոհմի սկիզբը կհասնի մինչև XIV դարի կեսերը. ուրեմն տոհմի մասին եղած փաստերը ամփոփում են շորջ 1350—1578 թթ., կամ ավելի քան երկդարյա ժամանակամիջոց:

Փաստական ոչ մի աղբյուր չկա, որի հիման վրա հնարավոր լիներ որոշելու մելիքական այս տոհմի իշխանության սահմանները. մնում է հաստատմիայն Վերին Քյոլաղրան գյուղը, որը եղել է տոհմի նստացք՝ անկասկած: Բայց այդ գյուղը մելիքական այս տոհմի մեջ հայտնի պատմությունից էլ շատ առաջ գոյություն է ունեցել. դրա համար կան նյութական փաստեր: Այսպիս. ավերակների մեջ կա փայտածածկ մի եկեղեցի, որ նոր է, բայց նրան կից է Հարավ-արևելյան ծայրից մատուռանման մի շենք, որի դուռը բացվում է եկեղեցու միջից: Այդ կից շենքը նույնպես նոր է, բայց նրա մեջ կանգնեցրած կան խաչքարեր, որոնցից մի կոտրվածը թեև անարձանապիր է, բայց քանդակների իր ոճով կարելի է անկասկած X—XI դարերին վերագրել: Բայց կան նաև գրավոր փաստեր. եկեղեցուց մոտ 150 մետր դեպի հարավ արևմուտք, ավերակների մեջ, մի շարքով և իրար մոտ կանգնած են մի խումք խաչքարեր, որոնցից երկուսի վրա կան արձանագրություններ, մեկը թվագրված է ԶՍԸ (1309), բովանդակությամբ աննշան է, բայց մեկ ուրիշը՝ Յ մետր բարձրությամբ՝ գեղարքանդակ է և արժեքավոր արձանագրությամբ:

Այս տոհմի հնությունը, հասնելով մինչև XIII դարը, հասկանալի է գառնում նաև տոհմի հիմնադրի անվան խնդիրը: XIII դարում Աղքուղա անունը տարածված էր շատ իշխանական տոհմերի մեջ՝ Զաքարյանների, Գովյանների, Օրբելյանների և այլոց. Հավանական է, որ դրանցից որևէ մեկի հետ կապ ունենաւ. բայց այդ խնդիրը չի մտնում մեր այս հոգվածի ծրագրի մեջ¹⁵:

Մի քանի խոսք գյուղի անվան մասին.

Քյոլաղրան անունը բնականարար օտար է և նոր, այն չկա նույնիսկ Զամբսի մեջ, այդ անունով նա չի հիշատակված նաև Պուղիկյան տոհմին վերաբերող վերը մեջ բերված աղբյուրներում:

Տեղագիր Հեղինակներից Մ. Սմբատյանը գրում է. ավերակ գյուղատեղում կանգնած խաչքարերի պատճառով այդ վայրը տեղացիք կոչում են «Կարմիր խաչեր», բայց «որո հին անունը՝ ըստ ակնարկության մի խաչքարի արձանագրության եղել է Վաղավեր»: Այս, ինչպես ստորև կտեսնենք, սխալից ենելով Սմբատյանցն այդ գյուղը Համարել է նույնը Մտ. Օրբելյանի ցուցակի մեջ Հիշատակված Վաղավեր գյուղի հետ, որը Սոթից գավառի գյուղերից էր¹⁶: Սմբատյանցից արտագրելով՝ նույնը կրկնել է նաև Ե. Լալայանը¹⁷: Հիշատակված խաչքարի արձանագրությունը այդ Հեղինակներից և ոչ մեկի աշխատության մեջ չկա, մեր բոլոր փնտրառութներն էլ տեղում իգուր անցան, բայց ոչ անօգուտ. դուանք երկու տապանաքարեր, որոնց վրա հիշատակված էր Վա-

¹⁵ Կարապետ Ֆեր-Մկրտչյանի կարծիքով այս մելիքները նույնպես Գովյան իշխանական անից են (տե՛ս Հիշատակված աշխատությունը, էջ 107):

¹⁶ Մ. Սմբատյանը, էջ 553:

¹⁷ «Աղղագը. Հանդես», 19, էջ 18:

Ա Հ Բ ՈՒ Խ Դ Ա Յ Ա Ն Ե Ր Ի Ս Հ Ա Վ Ո Ւ

Ա Ջ Ա Բ ՈՒ Խ Ա Ր Ա Կ Ա Կ Ա Կ Ա

Մ Ե Վ Ա Ք Ա Ո Ւ Կ Ա Ա

Մ Ե Վ Ա Ք Ա Ո Ւ Կ Ա Կ Ա Կ Ա + 1457

Լ Ի Խ Ա Վ Ա Կ Ա Կ Ա Կ Ա + 1466

Պ Ա Լ Ա Բ Ք Ա Ո Ւ Կ Ա Կ Ա Կ Ա + 1536 : Մ Ե Վ Ա Ք Ա Ո Ւ Կ Ա Կ Ա + 1536

Պ Ա Լ Ա Բ Ք Ա Ո Ւ Կ Ա Կ Ա Կ Ա + 1541 : Մ Ե Վ Ա Ք Ա Ո Ւ Կ Ա Կ Ա + 1578

Լ Ա Ա Մ Ա Մ Հ Ա Ա Կ Ա Կ Ա + 1550

Գ Ո Ւ Խ Ա Վ Ա Կ Ա Կ Ա Կ Ա (Կ Ա Վ Ա Կ Ա Կ Ա)

զաթին գյուղանունը (1661 և 1678 թթ.), բայց տապանագրերից պարզ երևում է, որ այդ ննջեցյալները եկվորներ են, վերջինի վրա պրված է:

ԱՅՍ է ՀԱՆԳԻՄ ՌԵԽԱՆԻՆ, ՈՐԴԻ ԶԱԼԱԼԻՆ, ՎԱՂԱԹՆԱԻ ԵԿՈ ՏԵՂԱ,
ԿԱՄԻՐ ԳՆԱԼ ՏԵՂՆ ԻՒԹ, ՀԱՆԳՈ Ի ՔԱ, ԹՎ; ՌՃԵԿ: (1678)¹⁸:

Բատ երեսլիթին հենց այս Վաղաթին տեղանունը սխալ կարդալով Վաղա-
լիք են հասկացել նշված հեղինակները, իսկ Վաղաթին գյուղ Գեղարքունիքում
չի եղել, այլ եղել է և այժմ էլ կա Սիսիանի շրջանում (Հին Շղուկ գավառ):

Ուշադիր նայելով մեր երկրորդ ցուցակը, որը կազմված է Տաթեկ արձա-
նագրությունից, տեսնում ենք մի օրինաշափություն. բոլոր անունների դիմաց
Հիշատակված են նաև նրանց գյուղերի անունները որպես որոշիչներ և Մելիք
Թանկրիդովու անվան դիմաց, որն այսուղ առաջինն է, կա վերջից թերի մի
բառ՝ Փառկուն: Մենք համարում ենք, որ ցուցակի ողուն համաձայն դա պիտի
լիներ Թանկրիդովի գյուղի անունը: Արդյոք այդպիսի անունով գյուղ եղել է
Գեղարքունիքում: Սա. Օրբելյանի ցուցակում կա Փառականք¹⁹ անունով գյուղ,
որը Հիշատակված է Վարդենիք և Վանավան գյուղի մոտ. իսկ Զամբռի մեջ այդ
նույն գյուղը հիշված է Փառկունիս ձևով, որպես Մաքենյաց վանքի թեմ²⁰:

Համոզված ենք, որ Տաթեկ արձանագրության մեջ Թանկրիդովի անվան
բիմացի թերի Փառկուն... գյուղը նույնն է Փառակունք-Փառակունիսի հետ, որը
և վերին Քյոլազրանի հին անունն է ու մելիքական այս տոհմի նստավայրը:

3. ԷՀԻԿ, ՈՐԴԻ ՊՈՒԴԱՂԻՆ ԹՈՌՆ ՏԵԼՈՒՂԱՐՏԱՇԻՆ

Մեր ունեցած արձանագրական նյութերի մեջ ուղղակիորեն այս տոհմին
վերաբերող ոչինչ չունենք, բայց Հիշատակված նախնիի անունը — Տէլուղար-
դաշ — առիթ է տալիս որոշ հնարավոր կռահումների: Այս անունը թուրքերեն
է, հայերեն բառացի կնշանակի զիծ եղբայր: Ներկա Կամոյի շրջանի Սարու-
խան գյուղի անունը մինչև վերջերս Դալուղարդաշ էր, բնականաբար Սա. Օր-
բելյանի ցուցակների մեջ այդ տեղանունը չկա, բայց Զամբռն ունի այդ անու-
նով գյուղ, որը մտնում է Հայրավանքի թեմի մեջ:

Զամբռի ցուցակի տեղանունների ամրող ցանկը ցույց է տալիս, որ ներ-
կա Կամոյի շրջանի (նոր Բայազետ) բոլոր գյուղերը եղել են Հայրավանքի թեմի
մեջ, որոնց թվում և Դալուղարդաշը, հետեւրար Զամբռի Դալուղարդաշը նույնն
է այժմյան Սարուխան-Դալուղարդաշի հետ, որը շրջանի մեծ գյուղն էր:

Տաթեկ կոնդակի մեջ Դալուղարդաշը անձնանուն է, իսկ Կամոյի շրջա-
նում այն տեղանուն է, կարծում ենք, որ փաստաթղթի Տէլուղարդաշը եղել է
անվանադիրն այս գյուղի. Հավանական չենք համարում, որ նա գյուղի հիմ-
նադիրը եղած լինի, կարծում ենք, սակայն, որ նա կամ նոր վերաբնակիչների
առաջնորդ, կամ ազդեցիկ մարդ է եղել այնքան, որ մոռացնել է տվել գյուղի
հին անունը և շրջակայիքի բնակիչները այդ գյուղը Հիշատակելիս այլևս գյուղի
անվան փոխարեն պարզապես ասել են Դալուղարդաշի գյուղ: Այս դարերում

¹⁸ Մի տապանագիր էլ կա պարոն Լալի, մելիք Տաթեկի անունով, որ առված է «Գեղշէն գորեսոյ»:

¹⁹ Սա ե փանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 514:

²⁰ Միմեռն Երեանցի, Զամբռ, էջ 283:

բազմաթիվ թուրքանում գյուղեր կան Հայաստանում՝ մարդկանց անուններով, հենց նույն Դալուղարդաշ-Մարտիսանի հարեանությամբ մինչև վերջերս կային Քյոսամահմատ (Հնում Գանձակ, այժմ Բաղիկյան), Քյարիմքանդ և ուրիշները, որոնց միայն մի մասի հին անունները հնարավոր է լինում վերականգնել շնորհիվ տեղում պահպանված հին արձանապրությունների:

Այս տոհմի տիրույթը համարելով Դալուղարդաշ-Մարտիսան գյուղը, որը իմաստ են ստանում այդ գյուղում պահպանված մի քանի տապանագրերը: Նախ ասենք, որ գյուղում եղել է շատ մեծ զերեզմանատուն, բայց այժմ բուրովին ավերված է և միայն հատ ու կենտ խաչքարեր և տապանաքարեր են մնացել, իսկ հին տեղագիրներից միայն Սմբատյանցն է, որ երկուսն արտագրել է, որից նույնությամբ վերցրել է և Ե. Լալայանը: Չնայած գերեզմանատան ավեր վիճակին, մենք այդ երկուսից բացի մի քանի ուրիշներն էլ դունք: Այսպես, զերեզմանատան հյուսիս-արևմտյան եզրին իրար մոտ կանգնած են երկու խաչքարեր, որոնցից մեկի վերին մասում, կիսեղծ վիճակում մնացել է հետևյալը:

Սբ Խ[ԱԶՍ ԲԱՐԵ]ԽԱԾ. —

ԻՍ ՄԷԼԻՔ ՄԱԼԻԽԱԾ —

Խն. ԹՎ, ՌՃՂՅ: (1683)²¹:

Այս նույն խաչքարի գիմաց մեծ և տափակ տապանաքար է, որը գեղի վելք երեք տատիճանով նեղանում է. տապանաքարի արևմտյան ճակատին զրված է —

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ [ՄԷ]ԼԻ —

Ք ՄԱԼԻԽԱԾ ԹՎ: ՌՃՂՅ: ԷՐ (1699):

Այս երկու հուշարձանների վրայի թվականների տարրերությունը պիտի բացատրել հետեւյալ կերպ: Մելիք Մալխասը իր կենդանության օրոք՝ 1683 թ., կանգնեցրել է խաչքարը, իսկ մահվանից հետո նրան թաղել են նույն խաչքարի գիմաց և տապանաքար դրել, որի վրա և նշանակել նրա մահվան թվականը՝ 1699 թ.:

Երկրորդ խաչքարի վերին մասը, ուր պիտի անձնանունը լիներ, բոլորով զարդարված է, միայն թերերի արանքներում մնացել է թվականը՝

ԹՎ: ՌՃՂՅ: ԷՐ (1712):

Սրանցից ոչ հեռու գտնվում է մի մեծ պատվանդան, որի վրա երկու գտարկ փոսեր կան խաչքարերի համար, որոնք երկուսն էլ կորած են, բայց պատվանդանի առաջ մնացել են երկու մեծ և տափակ գերեզմանաքարեր. դրանցից մեկի վրա գրված է.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ՄԵԼԻՔ
ՄԱՆՈՒԶԱՐԻՆ,

իսկ մյուսի վրա.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ՆԿՐՍԿԻՆ

²¹ Մ. Ս մ թ ա տ ա ն ց, էջ 503: «Ազգագրական հանդես», 19, էջ 136: Երկու հրատարակիչներն էլ միայն խաչքարի արձանագրությունն ունեն և թվականի մեջ կրկնակի սխալ, տառերով՝ ՌՃՂՅ: և թվանշաններով՝ 1709:

Սմբատյանցի ժամանակ այս պատվանդանի վրա կանգնած են եղել խաչքարեր, որոնցից առաջինի արձանագրությունը նա արտագրել է այսպես.

ՍՈՒՐԲ ԽԱՉԾ ԲԱՐԵԿԵՆՈՍ Է ՄԵԼԻՔ ՄԱՆՈՒԶԱՐԻՆ. ԹՎ. ՌՃԿԲ (1713):

Բացի մելիք տիտղոսով կոչված Մալխասից և Մանուչարից, որոնք ժամանելով 90—100 տարի ավելի ուշ են քան Տաթեսի վավերագիրն ստորագրած էին Դելուղարդաշյանը, այս գյուղից մենք ունենք մի քանի ուրիշ արձանագրություններ էլ, որոնք ըստ անձնանունների և պատվանվան պետք է կապ ունենան մելիքական այս տան հետ և թվականով էլ միջանկյալ տեղ են գրավում. հիշենք դրանցից երեքին: Գյուղամիջում եղել է ս. Խաչ անունով եկեղեցի, որը քանդելու ժամանակ բեմի ճակատից հանվել է մի մեծ և գեղաքանդակ խաչքար, այն տեղափոխել են և դրել գյուղացի Հայկազ Մալխասյանի բակում, տեղափոխելու ժամանակ խաչքարը մեջտեղից կոտրվել է և քիվին եղած մեկ տող արձանագրությունը ջարդուավել, բայց խաչի կողքերին պահպանվել է հետևյալը.

ՍՈՒՐԲ ԽԱՉԾ ԲԱՐԵԿԵՆՈՍ[Ի]Ս

ԴԱՒԼԵ ԱՅԻՆ

ԹՎ. ԶՊԼ (1548):

Մի փոքր խաչքար, որն ագուցված է ս. Գևորգ եկեղեցու արևելյան պատին, արտարուստ, ունի հետեւյալ արձանագրությունը.

ՄԲ ԽԱՉԾ ԲԱՐԵԿԵՆՈՍ[Ի]Ս ՂԱԶԱՐ[Ի]Ն, ՀԶԱՐՊ ԷԿԻՆ

ԹՎ. ԶՊԼ (1549):

Մի մեծ և գեղաքանդակ խաչքար ագուցված է Թուխ մանուկ մատուի հարավային պատի մեջ, ներքուստ, որի քիվին և թևերի շուրջը դրված է.

ՄԲ ԽԱՉԾ ԲԱՐԵԿԵՆՈՍ[Ի]ԽԵՐՈՒՏ Պ ԷԿԻՆ

ԹՎ. ՌԻԶ (1577):

Տարաբախտաբար մեր ունեցած բոլոր այս նյութերը տապանագրեր են, որոնցից և ոչ մեկի մեջ աղքակցական կապեր շկան հիշատակված, բայց նկատի առնելով մելիք, աղա, բեկ, տիտղոսների գործածությունը նույն գյուղի սահմաններում ժամանակի մի կարճ տևողության ընթացքում, համոզված ենք. որ դրանք բոլորը նույն տոհմին պատկանող մարդիկ են, որովհետև մեկ գյուղում մի քանի մելիքներ շեխն կարող լինել, իսկ բեկ տիտղոսով էլ կոչվել են մելիքների եղբայրները և որդիները:

Այսպիսով հավանական ենք համարում, որ Դելուղարդաշյան այս տոհմի բնակավայրը եղել է Կամոյի շրջանի (Նոր Բայաղետ) Դալուղարդաշ (այժմ Սարուխան) գյուղը, որ հին անունն անհայտ այս գյուղի անվանատերն է տոհմի պետ Դելուղարդաշը, և որ այստեղ եղած տապանագրերի մեջ հիշատակվող բեկերն ու աղան՝ այս նույն տոհմի անդամներն են, թեև տապանագրերի համառոտ բովանդակության հետևանքով, կապ ստեղծել նրանց մեջ հնարավոր չէ:

Վերջացնելուց առաջ մի փաստ էլ նշենք անձնանունից սերվող տեղանվան մասին և այն ոչ ընդհանրապես, այլ տոհմին վերաբերող: Տեսանք, որ այս տոհ-

մի անդամներից մեկը մելիք Մանուչարն է, մահացած 1713 թ., ինչպես երեսում է, սա նույնպես շատ ազգեցիկ մարդ է եղել, որովհետև որա անունով է մինչև այժմ կոչվում այն բնդարձակ անբնակ դաշտավայրը, որն ընկած է Բայազետի և Մարտունու շրջանների միջև։ Դաշտավայրը միանդամայն դուրկ է թե՝ սոսոգման և թե՛ խմելու ջրից, բայց պարարտ հող է և կամոյի շրջանի 3—4 դյուզերի ցորենի շտեմարանը։ 10-ի շափ քառակուսի կիլոմետր տարածության վրացցված բլրակների լանջերին մնում են հին փոքրիկ բնակավայրերի հետքեր և բազմաթիվ նախապատմական դամբարաններ։ Ժողովուրդը այս դաշտավայրը կոչում է «Մանիշարի Հովիտ» և ավանդաբար էլ պատմում, որ Հովիտն իր անունը ստացել է մելիք Մանուչարից, որն այնքան հարուստ է եղել, որ շահեղորդերին մի բանի օր կերակրել է իր շտեմարաններից²³։

4. ԹԱՐԽԱՆ ՔԹԱՇԻՆԵՑԻ

Այս անձնավորության ու նրա տոհմի մասին ոչ մի նոր բան չենք կարողացել հայտնաբերել, թեև հաստատավես ճշտել ենք նրա բնակավայր Քթաշինի վայրը և տեղում մանրամասն հետազոտություններ կատարել։

Քթաշին անունով գյուղ Ս. Օրբելյանի ցուցակում շկա, իսկ Զամբոի մեջ կամ Քթափոր ձևով, բայց Զամբոի այն օրինակի մեջ, որի օգտագործել է Շահաթունյանցը, զրկած է Քթաշին²⁴։ Դեռևս Ալիշանը այդ երկու ձևերի մեջ նույն տեղանունն է տեսել²⁵։

Այժմյան Բասարդեշարի Կարձազբյուր (նախկին Գյողակ բուլաղ) գյուղից 6—7 կմ գեղի հարավ (ավելի մոտ Յարփուղլու գյուղին, որի հանդամասն է այժմ), կա մի գյուղատեղի, որի մեծ մասն արդեն հարթվել և արտերի է վերածվել, բայց մնացել է մի փոքր տարածություն, որի կենտրոնում եկեղեցու հիմնապատերն են և շուրջը կանգնած խաչքարեր։ Խաչքարերի թվականներից ամենահինը XV դարի երկրորդ կեսից է։ Եկեղեցին էլ իր անմշակ քարերով և շինարարական տեխնիկայով վերաբերում է այդ ժամանակներին։ Ավերակ եկեղեցու մեջ իրար կից կանգնած են երկու խաչքարեր, զրանցից հարավայինը ավելի գեղեցիկ է, նրա ճակատին քանդակված են սրբապատկերներ ու կենդանիներ, որոնց ստորին մասում կարճ բացատրություններ։

ՏԸ ԱԾ

ՅԸ ՔԸ

— ՏԸ ԴԱԼԻԹ

Քիկունքին՝ 13 տող արձանագրություն։

ԱՂՍՏՈՒԾՈՎԱՆ ՄԵՔ ԴԱԼԻ —

ԵԹ ԷՐԵՑԱՅ Ե ։ (5)

ՈՐԴԻՔԱՅ ՍՈՒԼԹԱՆ

ՊԱԽԵԽԵ, ԵՎԻՇԵՍ, ԹՈՌԻ —

Ն ՊԱԼԱՄԻՆ, ՈՐ ԵՆՔ

ՄՆՈՒՆԴ ՍԱՐՈՒ ԱՄԻՐ —

²³ Տե՛ս նաև «Ազգագր. հանդիս», 18, էջ 132.

²⁴ Հ. Ծա՛յա թութանշանը, Բ, էջ 261.

²⁵ Ղ. Ալիքան, էջ 39, 64.

ՃԱՆԻՆ, ՈՐ ԲԱԶԱՒՄ ՃԱՆ —
ԵՒ ԵՒ ՀԵԱՐԵՒ ԲԵՐԵԼ ՍԱ —
ԾԳԱՀՆԱՅ ՊՈՒ ԱԱՐԵՆ
ԶԱՒՐՆ Ի ԴԱՇՏՆ ԳԹԱՅ —
ՇԻՆԱՅ. ՇԻՆԵԱՅ. Բ: ԶԱ. —
ՂԱՅՆ, ԵԹՈՂ, ՀԱՐԵՆ —
ԵՔ ԵՒՐ ՇՆՐՆԴԱՅ:

Իսկ հարավային կողին՝ 8 կարճ տաղով.

ԴԱԽԻ —
Դ ԿՐԵՅ
Կ[ԱՆ]Կ[Ա]Ե —
ՑԱՔ Խ —
ԱԶԵՐ —
Ա ԲԱՐԵ —
ԼԱԽԱ
ՄԵՐ

Երկրորդ խաչքարի քիվին միայն հետեւալ կարճ հիշատակագրությունը կա, որից պարզվում է, որ այն կանգնեցված է վերոհիշյալ Դավիթ երեցի որդի Սուլթանղուկի հիշատակին:

ԱԾ. ՈՂՋՐՄԻ ՍՈՒԹԱՆԴԱԽԵՆ

Այն հանգամանքը, որ զրչագրերում Քիթաշին և Քթաշին ձևով է գրված այս տեղանունը, իսկ արձանագրության մեջ Գթաշեն հարկավ կասկածի տեղիք տալ չի կարող, ու պարզապես զրիշների և կամ տեղական արտասանության տարրերությունն է միայն, իսկ տեղադրությամբ պյուղատեղը հեռու չէ Շողակա վանքից, որի թևմի մեջ է հիշատակված Սիմեոն կաթողիկոսի կողմից:

Ինչ վերաբերում է ժամանակի խնդրին, տարաբախտաբար երկու խաչքարից և ոչ մեկի վրա թիվ չկա, բայց որանց ընդհանուր ոճը և ապա բազմաթիվ ուրիշ թվագրվածները, որ կան տեղում, ինչպես շեշտել ենք, վերաբերում են ՀՎ դարի վերջերին և XVI դարին:

Թե երբ է զագարել կյանքն այս պյուղում՝ հշտորեն սահմանել չենք կարող մեր արտագրած տապանաբարերից ամենանորը վերաբերում է 1671 թվականին, բայց նա շեն է եղել, անշուշտ, Սիմեոն կաթողիկոսի օրոք (մինչև 1780 թ.), ալլապես չէր հիշատակվի «Զամբուռմ»:

Ավարտելուց առաջ հարկ կա որոշ դիտողություններ անել այս պյուղի և մեջ բերված արձանագրության վերաբերյալ տեղագրական գրականության մեջ սպրդած անհշտությունների մասին:

Դեռևս Սմբատյանցի նկարագրության մեջ այս ավերակները շփոթված են վերին Քյոլազրանի (Փառանկունք) հետ²⁶, այդ շփոթմունքը առավել խորացրել է Ե. Լալայանը. Հետեւելով Սմբատյանցին՝ վերին Քյոլազրանի նկարագրության մէջ է տեղագրել վերևի կարեռը արձանագրությունը և վայրն էլ կընթարել «վերին Քյոլազրան կամ Կարմիր խարապա» անունով²⁷: Ճիշտն այն է,

26 Մ. Սմբատյանց, էջ 553:

27 «Աղղագը», Հանդես, 19, էջ 7:

սակայն, որ տեղացիք գրանցից յուրաքանչյուրի համար ունեն առանձին անուններ՝ Վերին Քյոլաղրան և Կարմիր խրբեք: Այս երկու ավերակները 20 կիլոմետրի շափ իրարից հեռու են. առաջինը ներկա Ալուշալու գետակի հովտի սահմանումն է, իսկ երկրորդը Կարճաղրյուր գետակի, որի մասին կալայանն ունի միայն հիշատակություն. ըստ երեսութիւնի տեղում անձամբ չի եղել²⁸:

Բայց ավելի կարևոր է արձանագրության վերծանման հարցը: Լալայանը, որը միակ հրատարակիչն է այդ կարևոր արձանագրության, վերջին տողերի մեջ եղած տեղանունները բոլորովին այլակերպել է, որոնց կարգին «Պաշտոն Գթայշխնայ» բառերի մեջ, գաշտն հասարակ անունը գրել է մեծատառով՝ Դադրն ձեռվ և համարել է զյուղի անունը և բնդհանրապես արձանագրության վերջին տողերը դարձրել է անիմաստ:

5. ՇԱՂՈՒԹՅԱԹ ԳԱԽԱՌՆԵՑԻ, ՈՐԴԻ ԱՍՏՈՒՄԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ, ԹՈՌՆ ՄԻՐԱՆՇԻՆ

Գավառնի տեղանունը մատնացույց է անում Շաղուրաթի նստավայրը. դա ներկա Կամո քաղաքն է (նախկին Նոր Բայազետը): Լավ հայտնի է, որ այս վայրի հին անունը Գավառ էր (Ժողովրդական արտասանությամբ Քյավառ)²⁹ և իրոք, Շաղուրաթի տոհմական գերեզմանոցը գտնվում է Կամո քաղաքի արևմրտյան մասի «Դարի զլուխ» կոչված գերեզմանատանը, որը տեղադրված է հին, նախառարարական բերդի ավերակների մեջ, որտեղից և 1927 թվականին գտնվեց սեսլագիր արձանագրություն:

Այդ գերեզմանատան արևմտյան ծայրին երկու շարքով կանգնած են Բայազետի տանուտերերի հաշքարերն ու տապանաքարերը:

Շաղուրաթն իրեն անվանել է «Թոռն Միրանշին». այդ և այն պատճառով, որ գրանից ավելի հների մասին ստույգ տեղեկություններ չունենք, մենք ևս հարմար ենք գտնում այդ տոհմը կոչել Միրանշենց տոհմ:

Մեր հավաքած նյութերի մեջ Միրանշը (ուղիղ ձեռն է Միրանշահ) երեան է գալիս որպես հայր և պապ: Տոհմի հնագույն տապանաքարը Միրանշի որդի ևսավածատուրինն է, որը և Տաթեսի փաստաթուղթն ստորագրած Շաղուրաթի հայրն է: Այդ տապանաքարը մի մեծ (235×72 սմ) տափակ քար է, այժմ մեջ տեղից կոտրված, բայց երկու մասն իրար կից, երեսին երկու տողով և մեծ տառերով գրված է.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ԱՌԱՏՈՒՐ ԱՂԻՆ, ՈՐԴԻ ՄԻՐԱՆՇԻՆ

ԱՆՈՒՏԷՐ ԳԱԽԱՌԻՍ, ՅԻՇԵՑԼՔ Ի ՔԱ ԹՎ. ԶՀԳ. 1524)³⁰:

Աստվածատուրի տապանաքարի կողքին գտնվում է մի այլ մեծ տապանաքար, նույնպես երեսին գրված երկու տող.

28 Անդ, էջ 9:

29 Թ. Ավգալրեղյանը գտնում է, որ Գավառ տեղանունը ծագում է ավելի հին Գավառնի տեղանունից և ոչ թե հասարակ գավառ ձերից (տե՛ս Նոր-Բայազետի նորացյուտ սեպագիրը ու Նոր հնագիտական միջավայրը՝ հողվածը «Տեղեկագիր», ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի, 1927, № 2, նաև առանձնատիւզ, էջ 15):

30 Հրատարակված է շատ անգամ, բայց բոլոր գեպերում հավելումներով ու կրճատումներով: Ա. Զալալյանց, Շանհապարհորդություն, Բ, էջ 126 (այսուհետև՝ Ա. Զալալյանց): Դ. Ալիշան, էջ 44: Ա. Սմբատյանց, էջ 58: «Աղղաղը. հանդես», 19, էջ 112:

ԱՅՍ է ՀԱՅԳԻՍ ՇԱՀԱՆԱՔԱՆԻՆ, Է ԿՈՎԱԿԻՑ

ԱՇԱՏՈՒՐ ԱՂԻՆ. ԽԵՑԵՔ Ի ՔՍ. ԹՎ. 22 (1531):

Ի լրումն այս տապանաքարերի, պիտի հիշատակենք նաև, որ դրանց մոտ կանգնած է մի մեծ պատվանդան, վրան իրար կից երկու զեղեցիկ խաչքարեր³¹, որոնցից հյուսիսայինի քիվին և ստորին մասում գրված է.

ՄՅ ԽԱԶՈ ԲԱԼԲԵԿԱՆԻՍ ՇԱՀԱՆԱՔԱՆԻՆ, ԹՎ. ԶԺԳ (1534),

իսկ հարավայինի ձակտտին.

ՄՅ ԽԱԶՈ ԲԱԼԲԵԿԱՆԻՍ ՇԱՀԱՆԱՔԱՆԻՆ, ԹՎ. ԶԺԳ (1534)³²:

Այսպիսով հուշարձանների այս խմբի վրա եղած արձանագրությունների բովանդակությունը միանգամայն որոշակի պարզում է Տաթեի փաստաթուղթն ստորագրած Շաղուբաթի բնակավայրը և դեռ ավելին, հայտնաբերում է նաև նրա մոր անունը՝ Շահսուլթան:

Տեղում կատարած մեր ուսումնասիրությունները առատ նյութ են տալիս այս տոհմի ցանկը կազմելու համար: Բայց նախքան դրանց անցնելը, հարկավոր է վերջինների մասին մի փոքրիկ պարզաբնում: Շահսուլթանը, ըստ երկրորդ տապանագրի, մահացել է 1531 թ., իսկ երրորդ արձանագրությունը գրրված է 1534 թ.: Այս թվացող անհարիրությունը հասկանալի է, դառնում հաջորդ արձանագրությամբ, որն իր և որդի Շաղուբաթի անունն է հիշատակում: Ինչպես ասացինք մայր ու որդու խաչքարերը կանգնած են մի պատվանդանի վրա, տապանաքարերից մի փոքր հեռու, ուրեմն ոչ թե նրանց գլխին, ինչպես սովորաբար լինում է, երբ զերեզմանն է վերջնական ձեւվորվում: Հետեւարար 1534 թվականի խաչքարը կանգնեցվել է տոհմական զերեզմանոցում Շաղուբաթի կողմից՝ ի հիշատակ իր մոր, և այդ կանգնեցման թվականն էլ նշված է խաչքարի վրա, իսկ Շահսուլթանը մեռել է 1531 թվականին:

Անդրադառնալով նախ Շաղուբաթին, հիշենք, որ նա Տաթեի փաստաթուղթը ստորագրել է 1513 թ., իսկ իր մոր և իրեն հօմար խաչքարեր կանգնեցրել է 1534 թ.: Բայց ալժմ կորած մի տապանագրից երեսում է, որ նա հենց այդ թվին էլ մահացել է: մոր կողքին կանգնած նրա խաչքարի դիմաց՝ ժամանակին եղել է տապանաքար հետեւալ արձանագրությամբ.

ԱՅՍ է ՀԱՅԳԻՍ ՇԱՀԱՆԱՔԱՆ, ՈՐ ԷՐ ՏԱՆՈՒՏԵՐ

ԳՈՒՅՈՒԹԻՆ, ՈՐ ՓՈԽԵՑԱՒ ԱՌ ՔՐԻՍՏՈՍՈՒ³³:

Որպես տոհմական ավագ՝ Շաղուբաթին հաջորդել է նրա եղբայրը, թուժան, սրա տապանաքարը և խաչքարը գտնվում են տոհմական զերեզմանատան հյուսիսային մասում: տարաբախտաբար երկուսն էլ առանց թվականի: Խաչքարի քիվին գրված է.

ԿԵՆԳՆԵՑԱՒ ԽԱԶՈ Ի ՓՐԿՈՒԹՅ ԹՈՒՄԱՆ ԱՂԻՆ,

ՈՐ Է ՈՐԴԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՐ ԱՂԻՆ:

³¹ Խաչքարերն իրենց պատվանդանով թերված են զեպի առաջ, բայց դեռ կանգուն են:

³² Մ. Զ ա լ ա լ լ ա ն ց, էջ 126: Ա լ ի շ ա ն, էջ 44:

³³ Մ. Սմբատյանցը (էջ 58) խաչքարի և տապանաքարի արձանագրությունները միացրել է և թիվը նշանակել ԶԺԳ, որը սխալ է: Ինչպես տեսանք թվականը խաչքարի վրա էր ԶԺԳ, թ. Ակուգուրեկյանը ճիշտ է թվագրել (տե՛ս, Անդ, էջ 13):

իսկ դիմացի տապանաքարի վրա.

ԱՅՍ է ՀԱՆԳԻՍ ԹՈՒՄԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ԱՍՏՈՒԱՇԱՏՈՒՐ ԱՊԻՆ:
ՀԱԽՆԱԶԱՐ, ԹՈՄԱ, ԿՈՒԼԱՂԱ³⁴.

Քոլոր հրատարակիչները առաջին արձանագրության վերջում դնում են թվականը՝ ՌԻԵ (1596), որը մենք տեղում շենք տեսել ու գրել կարծում ենք, որ հրատարակիչներից հնագույնը շփոթել է և մյուսներն էլ մերենայորեն կրթիքնել են նրան:

Երկրորդ արձանագրության վերջին երեք անունները գրված են խաչքարի հարավային նեղ կողին՝ սղումներով: Սղումները լրացրել ենք զրանց լրիվ ձևերը բաղելով հարեան խաչքարերից ու տապանաքարերից: Այդ անունները կրողները, անշուշտ, թումա աղայի զավակները կամ թոռներն են, որոնք կանգնեցրել են խաչքարերը:

Թումա աղայի կնոջ անունը կրող խաչքարը կանգնած է ամուսնու խաչքարի հետ միևնույն պատվանդանի վրա, որի քիլին, ստորին մասում և հարավային կողին գրված է.

ԾՆՈՐՉԻԻՆ ԱՅ ԿԱՆԿՆԵՑԱԿ Խ[Ա]ԶՍ ՓԲԿՈՒԹԵ ՀՈԳՈՅՆ ՊԱՐՈՆ ՀԵՂԻՆԵՐՆ
ՄԲ ՄԱՍ ԲԱՐ ԷԽԱԲԻՍ ԳՈՒԼԱՂԻՆ ԽՆԵՑԼՔ Ի ՔԸ. ԹՎ. ԶՊ. ԶՊ. (1548)³⁵,

Տոհմի այս սերնդին վերաբերող մի հուշարձան էլ, որն այժմ տեղում չկա, եղել է մի տապանաքար, այսպիսի արձանագրությամբ.

ԱՅՍ է ՀԱՆԳԻՍ ՓԻՐԻ ԲԷԿԻՆ, ՈՐԴԻ ԹՈՒՄԱՆ ԱՊԱՅԻՆ
ԹՎ. ԶՊ. (1541)³⁶:

Ինչպես տեսանք թումա աղայի և իր կնոջ՝ Հեղինեի հուշարձանների վրա, որպես նրանց կանգնեցնողներ, հիշատակված են նրանց զավակներից կամ թոռներից հետեւյալները՝ Հախնազար, թումա և Կուլազա. զրանցից միայն Հախնազարի անունով է մնացել այժմ առանձին խաչքար, որը պատվանդանից ընկած և կոտրված էր մեջտեղից, այդ պատճառով էլ տեղափոխվեց Երևան և պահպում է Մատենադարանում: Այդ խաչքարը շափազանց կարեոր է թե իր վրայի արձանագրություններով և թե այն շինող-կազմող վարպետ Ծիրամի արվեստի և կյանքի ուսումնասիրության տեսակետից:

Խաչքարի ճակատին, թերերի շուրջը և ստորին մասում գրված է.

ՄԲ ՆՇԱՆՍ ԲԱՐ ԷԽԱԲԻՍ ՀԱԽՆԱԶԱՐ ԱՊԻՆ

[ՔԻ]ՐԱՄ ԿԱԶՄՈՂ: ԹՎ. ՌԻԵ: (1598)³⁷:

Սակայն թե պատմական և թե Հախնազարի դերն ու նշանակությունը բնորոշող ավելի կարեոր արձանագրությունը փորագրված է այդ նույն խաչքարի թիկունքին:

³⁴ «Աղայագր. Հանդես», 18, էջ 125: Ղ. Ալիշան, էջ 45: Մ. Սմբատյանց, էջ 57:

³⁵ Մ. Զալալյանց, էջ 125: Ղ. Ալիշան, էջ 44: Մ. Սմբատյանց, էջ 57: «Աղայագր. Հանդես», 18, էջ 111: Վերջին երկուսը Հեղինեի փոխարեն կարդում են Հիկնի:

³⁶ Մ. Զալալյանց, Բ, էջ 126: Ղ. Ալիշան, էջ 44: Մ. Սմբատյանց, էջ 59: «Աղայագր. Հանդես», 18, էջ 112:

³⁷ «Աղայագր. Հանդես», 18, էջ 111:

Ի ՓՈԽՈՒՄ ՂԱԻՉՈՒ —
 ԱԾԽՆ ԳԱՐՎԵԺՈՒ ՈՒՍ
 ՄԱՆԼԻՎԻՆ, ՈՐ ԳԱՎ —
 Ա(ՌՍ) ԱՎԵՐԵՑԱԼ, ԹՎ; ՈՒ —
 Ա. (1582), ԵՍ ՀԱԽՆԱԶԱՐՈ ԵՒ —
 Ի ՇԲՆԵՑԻ ԹՎՈՒՆ; ՈՒՅ; (1591). ՈՎ Կ —
 ԱՐԴԱՅ ԱՆ ՈՂՈՐ —
 ՄԻ ԱՍԻՑ:

Ինչպես հայտնի է թուրք-պարսկական երկարատև պատերազմների թաւերաբեմ հանդիսացող Հայաստանի արևելյան նահանգները դաժան ավերածությունների ենթարկվեցին գրեթե ամբողջ XVI դարի ընթացքում, մինչև 1590 թվականի կարձատե հաշտության պայմանագիրը, որով ամբողջ Անդրկովկասր անցավ թուրքերի ձեռքը. վերէիշյալ արձանագրության մեջ նշված առաջին թվականով՝ 1582, պարզվում է, որ Գեղարքունիքը ավերածության է ենթարկվել այդ թվին և երկրորդ թվականով՝ 1591, որ Հախնազարը, ըստ երեսւթին ժողովրդի հետ բոշած լինելով, վերադարձել է ու զեկուվարել Գավառի վերաշինությունը: Այդ փաստը կարեոր է նրանով, որ ապացուցում է այս աղա Հորշվող տանօւտիրական տոհմի երկարատև ժառանգական բնույթը:

Սակայն Հախնազարի այս հուշարձանը խմբական է, այսինքն մի պատվանդանի վրա կանգնած են երկու խաչքարեր, որոնցից մեկի վրա վերևում բերված արձանագրություններն են, իսկ մյուսի վրա, որն ընկած է պատվանդանի դիմացը և նախորդի նման մեծարվեստ է, իր ճակատին ունի նախորդի նման ուսուցիկ տառերով հետեւյալ արձանագրությունը:

ՍՅ. ԵԱԶՍ ԲԱՐԷԽ[Ա.Ի]Ս ՊԱՐ[ՈՒ] ՇԱՀՆԱԶԱՐԻՆ:

Թվական շունի թեկ, բայց խաչքարի ընդհանուր ոճը ապացույց է, որ նույն տաղանդավոր Քիրամի ձեռագործն է և ժամանակակից նախորդին: Հահնազարը կամ պիտի Հաղնազարի եղբայրը լինի կամ որդին:

Հահնազարով սկսվում է այս տոհմի ավաղների համար «աղա» կոչումի վերացումը և «պարոն»-ի սկզբնավորումը. բավականանանք միայն երկու օրինակով:

Վերջին հուշարձանների մոտ, նրանց ոճով, մի պատվանդանի վրա կանգնած են երկու գեղաքանդակ խաչքարեր, հյուսիսայինի վրա նաև սրբապատկերներ. ճակատին, շրջանակների արանքում և ստորին մասում, զրկած է.

ՍՅ ՆՇԱՆՍ ՏԵՐՈՒՅԱՆ, ՊԱՀԱՅՊԱՆ Է Պ[Ա]Ր[ՈՒ]

ԱՌԱՏՈՒՐԻՆ. ՅԱ. ՔԱ. ՏՐ. ԱՅ.

ԱՌԱՔԵԼ ՄԵԼՔ[ՍԵ]Ր. ԹՎ. ՈՒՅ. (1577)³⁸:

Հյուսիսայինի վրա

³⁸ Ա. Զարաւոնցը (Բ, էջ 247) սխալ վերծանելով այս արձանագրությունը, Գավառի ավերումը վերագրում է Գաղատանից արշագող լեզգիներին:

³⁹ Ա. Զարաւոնցը, Բ, էջ 125 (անունը Շատուր): Ա. Մարատյանը, էջ 54: «Ազգագր. Հանդես», 17, էջ 3:

φετη, πετη + 1521, πετη : ποτηνα : λιθηγηπη πετη : 1598 : ποτηνα συζητηριον πετη, πετη, 1513 + 1531 : πετηνα πετη πετη : 1548 :

υστησημε πετη + 1524, πετη, πετηπετη + 1531

υπετη[πετη]

υπετησημε πετη + 1531, πετη : ποτηνα

**ԱՅ. ԽԱԶԱ ԲՈՐԵԿԱՆԻ Պ[Ա]Ր[ՈՒ] ԹԱՇՈՒՄԻՆ
Ա.ԹԱ.ՔԵԼ ՄԵԼՔԻՍԵԹ ԿԱԶՄՈՂ ՏՐ. ԱԾ⁴⁰:**

Տոհմական այս պերեգմանոցից դեռ շատ տապանագրեր և անուններ կան մեր ձեռքի տակ, բայց դրանց մեջ ուղղակի սերնդական կապ հաստատել հնարավոր չի լինում՝ այդ պատճառով էլ թողնում ենք: Սակայն արժե հիշատակել, որ 1531 թվականին երեան է գալիս դրանց մեջ մի նոր անուն՝ Տիլիան, յուր կին Սիրմա խաթունի հետ, և սրա սերնդի մի քանի անդամներ, որոնք իրենց հիշատակությունների մեջ Տիլիանի որդի կամ թոռ են անվանվում: Կարծում ենք, որ սրանք Միրանշենց տոհմի մի երկրորդական ճյուղի ներկայացուցիչներ են, որովհետեւ իշխանական ոչ մի տիտղոս կամ պաշտոն չեն հիշատակում իրենց տապանագրերի վրա:

Այսպիսով, մոտ մի զար տեսդ այս տոհմի անդամների համար գործածված ենք ահսնում աղա, տանուածեր և պարոն կոչումները միայն և երրեք մելիք: Օրինական հարց է առաջանում, Գավառ ավանը, որը շրջանի մեծ գյուղը կամ ավանն է եղել, ինչո՞ւ մելիքը շի ունեցել կամ մելիքանիստ եղել, երբ նույն շրջանի երկրորդական գյուղերը մելիքանիստ են եղել: Հազիվ թե բավարար լինի ասել, թե չեն պահպանվել մելիքների հուշարձանները, այն էլ այն դեպքում, երբ տանուածիրական տոհմից, ինչպես տեսանք, տասնյակներով են պահպանվել:

Մեր ձեռքի տակ կտ մի փաստ, որը թերեւ որոշ շափով լուսաբանում է այդ բնդիրը: Կամո քաղաքի արհելյան ծայրին, ձորի մեջ, զետի ձախ ափին կա մի ավերակ, հասարակ եկեղեցի և շուրջը պերեգմանատուն, որի հարավալին եղրին ընկած մի խաչքարի վրա կա հետևյալ արձանագրությունը.

**ԱՅ. ԽԱԶԱ ԲՈՐ[Է]Խ[Ա.Է] Է ԿԱ.ՄԱ.Ի ԴԵՏԻՆ
(ԵԲ) ԷՎԱ.Տ ՄԵԼՔԻԹԻՆ. ԹՎ. Հ[Ա.ՅՈՒ] Ո.Ժ. (1637):**

Այս արձանագրությունը, թեև բավական ուշ, բայց ապացուց է Գավառում մելիքի գոյության. Հնո՞ւց է սերվում մելիքական այս ընտանիքը և արդյո՞ք կապ ունի Միրանշենց տոհմի հետ, չենք կարող պարզել:

6. ԲԱՇԱՐԱ.Թ ԿՈԹԵՑԻ

Կոթ գյուղը ներկայիս Մարտունու շրջանի Գետաշեն գյուղն է, մոտիկ անցյալում նա կոչվում էր ներքին Աղիաման: Ստ. Օրբելյանի ցուցակում այն Գեղարքունիքի առաջին գյուղն է և հարկի ամենամեծ շափով: Բայց դրանից շատ առաջ էլ նրա մասին պատմագրական և արձանագրական տեղեկություններ են, որոնց մեջ կոչված է գյուղաբաղադր, ավան⁴¹: Կոթ ավանը նստոցն էր Սյունյաց իշխանների Գեղարքունիքի ճյուղի: Այստեղ Գրիգոր Սուփան Բ իշխանը Խ դարի սկզբին շինեց ճարտարապետական նշանավոր մի հուշարձան, ոսթա և Աստվածածին տաճարը, որը թեև խիստ վնասված, բայց կանգուն է մինչեւ այժմ:

⁴⁰ Ա. Մ. Բ ա տ յ ա ն ց, էջ 58: «Ազգագր. հանդես», 17, էջ 112:

⁴¹ Ա. Ա ժ ա ծ ն ի 1X դարի շինարարական արձանագրության մեջ Սուփան իշխանը հիշատակում է ոի քաղաքագիւղ Կոթայ, ի կացուածի իմոց նախնեացնու: Տե՛ս Ս ա. Օ ր բ ե լ ե ա ն, «Պատմաւթիմ», Թիֆլիս, 1911, էջ 177:

Կոթ ավանի նշանակության բարձրացման պատճառն այն էր, որ Արարատյան գաղտից՝ Վայոց ձորի վրայով՝ դեպի Սևանա ավաղանը և Արցախ անցնող ձանապարհը, զուրս գալով Սելիմի լեռնանցքից, այդ ավանում միանում էր դեպի նույն վայրերն ընթացող մյուս ճյուղի հետ, որն անցնում էր Կոտայքով, ապա Սևանի լճի հարավային ափերով:

Կոթ ավանի այդ կարեոր հանգուցային նշանակությունն ապացուցող մի անհայտ արձանագրություն է մեզ հաջողվել Հայտնարերեւ, որը և հարմար ենք համարում մեջ բերել:

Վերոհիշյալ ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատի տակ, արտարուստ, տապանաքարերի արանքում ընկած է տեղահան եղած մի որմնախաչ, որի ստորին մասում գրված է.

ՅԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՍ ՍԱՐԳԻ —

Ս ՇԵՆԵՑԻ. Բ; ՓՆԴՈՒ —

Կ ԳԱԳԿԱ. ԱՐԵՒԲԻ —

ՅԵ ԵՒ ԻՄ ՄԵՂԱՅ:

Գագիկը մեծ հավանականությամբ Բագրատունին է և հավանաբար առաջինը (990—1020). Փնդուկները՝ իշխանատները անրաժան մասն էին կարավանային ձանապարհների, ներկա գեպքում ուն Սարգիս, որը հավանաբար արքունական պաշտոնյա էր, երկու հատ միանգամից է շինել Կոթ ավանում:

Կոթ ավանը ներկա գյուղից շատ ավելի մեծ է եղել, նա տարածվել է գյուղի հարավային սարահարթի վրա, որտեղ մնում են բազմաթիվ հին շենքերի ավերակներ և նշամարվում փողոցների ուղղությունները:

Այսպիսով Կոթ ավանի տեղը միանգամայն ստույգ է, մնում է Տաթևի փառաթուղթն ստորագրած Բաշարաթի հետքերը գտնել այստեղ: Վերեւում հիշատակած Կոթա ս. Աստվածածին եկեղեցին ունի նաև հարավային մուտք. այդ մուտքի առաջ՝ պատին ուղղահայաց կանգնած են երկու շարք խաչքարեր, որոնք ձևացրել են մուտքի առաջ միջանցքանման տարածություն. այդ բոլոր խաչքարերը XV—XVI դարերի են և մեծ մասամբ Ակոր վարպետի ձեռքի աշխատանքներ: Այդ խաչքարերի մի շարքը կազմված է շորս հատից, որոնք կը պած են իրար. ստորին մասերը խրված հողի և թափված բեկորների մեջ: Այդ շարքերի առաջին խաչքարը, որը կից է պատին, ձակատին ունի մեկ տող հետևյալ արձանագրությունը.

ԵՍ ԲԱՇԱՐԱԹ ԱՂԷՍ, ՈՐԴԻ ԻՄ ԱՏԵՓԱՆՍ ԿԱՆԵՆԵՑԱՔ

ԽԱԶՍ Ա.ՍՈՒԿԱՆԵՒ:

Որա կողքինի վրա մնացել է երկու բառ:

ԵՍ ԸՍՏԵՓԱՆ...

Երրորդի վրա՝ ամբողջ տողով՝

ԵՍ ԸՍՏԵՓԱՆ[Ս], ԿԱՆՈՒՄՍ, ԱԼՍԱՆՍ, ԿԱՆԿՆԵՑԱՔ

ՄԲ. ԽԱԶՍ:

Հորրորդի վրա՝

ԵՍ ՄԱՆՎԵԼՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱԶՍ ԲԱՐՈՒԵՂ ՔԱՀԱՆԱՅԻՆ

ԶԿԱԶՄՈՂ ԱԿՈԲ, Ի ԹՎ. ԶՂԱ. (1542):

Առաջին արձանագրության առաջին անունը — Բաշարաթ աղա, Տաթևի վավերագիրն ստորագրողն է անշուշտ, բայց ուշագրավ է այն, որ Տաթևի արձանագրության մեջ հիշատակված է նաև Ստեփանոս Կոթեցին. ներկա արձանագրությամբ պարզվում է, որ նա Բաշարաթի որդին է. նրա անունը կրկնվում է երեք անգամ այս խաչքարերի վրա: Խաչքարերի վրա մյուս հիշատակվածները անգայման Բաշարաթի գերդաստանի անդամներն են, բայց թե ի՞նչ կապով, որոշել շենք կարող: Բայց այդ անունների շնորհիվ հեշտությամբ կապ է ստեղծվում այստեղ կանգնած այլ խաչքարերի վրա հիշատակված մարդկանց հետ, որով պարզվում է, որ Բաշարաթի տոհմը մեծ և ազգեցիկ է եղել:

Բերենք այդ կարծիքը հաստատող մի քանի անուններ:

Ըստ առաջին արձանագրության Բաշարաթը խաչքարը կանգնեցրել է Ասուկանի հիշատակին: Այդ հազվագեց անունը կրկնվում է Հուշարձանի արևելյան պատի տակի զույգ խաչքարերից մեկի վրա, իսկ դրան կիցը՝ թվագրված 1543-ով, Սիրամարդինն է, անշուշտ, Ասուկանի ամուսինն է: Չորրորդ արձանագրության մեջ հիշատակված Բարսեղ քահանայի անունով կան երկու խաչքարեր իր և տմուսնու համար, կանգնեցված 1531 թվականին և ուրիշներ, որոնք չենք հիշտուակում:

7. ՄԱԹԻՌԱԿԱՆ ԿԱՌԵՑԻ

Վերջին դարերի տեղագրական գրականության մեջ Կած գյուղ չկա հիշատակված: Ամենավերջին հիշատակությունն ունի Սիմեոն Երևանցին՝ Կածիք ձևով, Մաքենաց վանքի թեմին պատկանող գյուղերի ցանկում⁴²:

Կածիք գրությամբ այս գյուղը գտնվում է նաև Ստ. Օրբելյանի մոտ, Գեղարքունիքի գյուղերի ցանկում 15 շաբաթակով⁴³, որից երեսում է գյուղի խոշոր բնակավայրերի շարքին պատկանելը: Բայց բոլոր այս թուուցիկ հիշատակությունների հիման վրա գյուղի տեղագրությունը ճշտել անհնար է: Բարեբախտաբար գոյություն ունի Կած գյուղի մասին մի հիշատակարան, ուր հիշատակվում են մեծ թվով անձնանուններ, որոնք, համեմատվելով մեր ձեռքի տակ եղած տապանագրերի հետ, հնարավորություն են տալիս այդ խնդիրը լուծել դրականորեն:

Սևանի վանքի ձեռագրերի ժողովածուի մեջ եղել է մի Ճաշոց, գրված 1465 թվականին Գեղարքունիքի Կած գյուղում⁴⁴, գրիչն է Հովհաննեսը, որը պանդրիսել է Վասպուրականից և հաստատվել Կած գյուղում, ուր և գյուղի երկու քահանաների՝ տեր Մանվելի և տեր Ստեփանոսի պատվերով ընդօրինակել է այդ Ճաշոցը: Ընդարձակ հիշատակարանի մեջ հիշված են պատվիրատու երկու եղբայր քահանաների աղքատոհմի բազմաթիվ անդամների անուններ, որոնց հիմնական ձյուղը կամ շարքը հետեւալին է՝ Ամիրեկ և Գյուլ-մելիք, սրանց որդիներն են ձեռագրի պատվիրատուներ Մանվել ու Ստեփանոս քահանաները և Սովորանն ու Ելրեկը, իսկ Սովորանի որդիներն են Շահնաղարը, Խոշնաղարը,

⁴² Տե՛ս «Զամրո», էջ 283:

⁴³ Ստ. Օրբելյան, Պատմություն, էջ 513:

⁴⁴ Ն. Ման, Յուցակ Համառօտ ձեռագրաց Սևանայ վանոց, Մոսկվա, 1892, էջ 18—19, Ձեռագիրն այժմ պահպում է Մատենադարանում 3758 համարի տակ: Հիշատակարանը տե՛ս Լ. Հանզիկյան, Ժիշտի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն. Բ, էջ 230—231:

Մարգարե դպիրը և Սահակը, ապա էլի բազմաթիվ աղքականների անուններ, որոնք չենք հիշատակում:

Այս հիմնական շարքի մեջ մեր նյութի համար կարևոր նշանակություն ունեցավ Սովորականի որդիների շարքը՝ Շահնադար, Խոշնադար և Մարգարե դպիր անուններով:

Թերթելով մեր դաշտային օրագրերի տետրակները, Մարտունու շրջանի այժմ Աստղաձոր, նախկին Ալի-զրորխ գյուղի արձանագրություններից մեկի մեջ գտանք այդ երեք անունները միասին հիշատակված. այդ արձանագրությունը գրված է գյուղամիջի ս. Պողոս-Դեմքոս եկեղեցու բակի հարավային մասում կանգնած մի ղեղաքանդակ խաչքարի վրա, որի միայն հյուսիսային նեղ կողին է գրված հետեւալ արձանագրությունը, 19 կարծ տողով.

ԿԱՄԱՔՆ ԱՅ ԵՍ ՄԱՐԳԱՐԱՅ ՔՈՀԱՆԱՅ ԿԱՆԴՆԵՑԻ ԶԽԱՂԱ

Ի ՓՐԻՌԻԹԻՒՆ ՀՈԴՈՅ ԵՎԲԱԿԻՐՆ ԻՄՈՅ ՇԱՀՆԱՏԱՐԻՆ (ԵԿ) ԽԱՒՇՆԱՏԱՐԻՆ,
ՈՐ ՏՂԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈԽԵՑԱԿԻՆ Ի ՔԱՅ

Այն հանգամանքը, որ հիշատակարանի մեջ Մարգարեն դպիր է, իսկ արձանագրության մեջ քահանա, ոչ միայն որեւէ շափով շի խախտում դրանց նույնության հարցը, այլև հնարավորություն և ընձեռում ավելի հավանական թիվ որոշել անթվական այս արձանագրության համար: Դպիր Մարգարեն անշուշտ մի հինգ տարի հետո արդեն քահանա կձեռնադրվեր, արձանագրությունից էլ երեսում է, որ նրա ավագ եղբայրները երիտասարդ հասակումն են մահացել. այս բոլորը նկատի առնելով՝ կարող ենք հավանական համարել, որ արձանագրությունը գրված պետք է լինի ձեռագրի հիշատակարանից 10—15 տարի հետո, այն է 1475—1480 թվականներին:

Այս Աստղաձոր — Ալի զրորխ — Կած գյուղի արձանագրությունների մեջ կան շատ անուններ ևս, որոնք համընկնում են Շաշոցի մեջ հիշատակվածների հետ, բայց չենք հիշատակում, որովհետև աղքակցական շարքերով շեն միանում հիշատակարանի մեջ հիշվածների հետ, հետեւարար կարող են պատահական գուգաղիպություններ լինել:

Ինչ վերաբերում է Տաթեսի փաստաթուղթն ստորագրած և գեռ 19 տարի հետո էլ նույն տեղի արձանագրության մեջ հիշատակված մելիք կամ տանուտեր Մաթէոս անվանը, ապա այդպիսին չկա մեր ժողովածուի ոչ մի արձանագրության մեջ:

Այսպիսով մեզ հաջողվում է դեռևս Ստ. Օրբելյանի մոտ հիշատակված և վերջին անգամ Սիմեոն կաթողիկոսի կողմից հիշված Կածիր-Կած գյուղի տեղագրությունը միայն հաստատապես որոշել:

Բայց վերջացնելուց առողջ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մի սխալ կարծիքի.

Գեղարքունիքը տեղագրող հեղինակներից Մ. Մմբատյանցը, որը ձամփորդել է այս կողմերում XIX դարի վերջին տասնամյակում, այս գյուղի նկարագրությունը սկսում է հետեւալ վերնագրով — Ալիզրորխ ի հնում Խաչաձոր⁴⁵, որը նույնությամբ կրկնում է Ե. Լալայանը — Ալի-զրորխ հնում խաչաձոր⁴⁶: Խաչաձոր անունով գյուղ չկա Ստ. Օրբելյանի ցուցակում և ոչ էլ Սիմեոն

45 Մ. Ամբատյանց, Տեղեկագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի, էջ 543:

46 Ալղազը, Հանդես, 18, էջ 149:

կաթողիկոսի մոտ, Ամբատյանից առաջ Գեղարքունիքի տեղագրող Հ. Շահնազունյանցը պիտի այս գյուղի միայն Ալիղը որիս անունը⁴⁷: Թե ինչ հիմք է անհետ Ամբատյանցը գյուղի հին անունը Խաչաձոր կնքելու՝ մեզ անհայտ է և թվում է կամայական: Ուզում ենք նշել և այն, որ գյուղը հին է, այստեղ հավաքած մեր արձանագրությունների ժողովածուի մեջ կան XIII դարին վերաբերողներ:

8. ԱՅՍՄԱՅԿՈՒԼ (ԳՈՒԼ) ԿՆՇՈՒԽԵՑԻ

Այս անձնավորություն մասին տեղում ոչ մի հիշատակություն մնենք շկարողացանք գտնել, թեև կնձուտ անունով երկու գյուղ կա և երկուսն էլ շեն են: Այդ գյուղերը գտնվում են ներկայիս Մարտունու շրջանում և առնվազն XIX դարի սկզբից կոչվում էին ներքին և վերին Ղարանլուխ. ներքինը այժմյան Մարտունին է, իսկ վերինը նախորդից մոտ 3 կմ զեափի հարավ է գտնվում և այժմ էլ պահպանել է Ղարանլուխ անունը⁴⁸:

Կնձուտ տեղանունը Օրբելյանի ցուցակում շկա, բայց Զամբոն ունի երկուսն էլ Մեծ և Փոքր Կնձուտ ձեռվ, որոնք մտնում են Մարենաց վանքի թեմի մեջ: XIX դարի Ալաշկերտի գաղթականություն ժամանականից ներքին Ղարանլուխն է նշանակալից եղել, բայց գրանից առաջ, Տաթևի վաճերագիրն ստորագրելու ժամանակ, հավանաբար Վերին Ղարանլուխն է մեծ ու նշանակալից եղել. նախ այն պատճառով, որ հին կարավանային ճանապարհը Սելիմի լեռնանցքից գալով մտել է վերին Կղնուտ և այդտեղից ուղիղ անցել Կոթ ավանը՝ մի կողմ թողնելով ներքին Կղնուտը: Վերին Ղարանլուխը լինելով Սելիմի լեռնանցքի նախագույք Գեղարքունիքում, այդ ճանապարհի պահպանության համար ունեցել է բերդ-պահակատուն, որը գտնվում է գյուղի գլխին և համարգում է Ասողիկի հիշատակուծ Ալբերդը⁴⁹:

Դրանցից բացի այստեղ եղած գերեզմանատներն ու այլ հուշարձաններն ավելի շատ են, քան ներքին Ղարանլուխում: Այս հովտի շեն և ավելո բոլոր գյուղերի արձանագրությունների մեջ, որոնց թիվը մեր հավաքածուում 100-ի է հասնում, Գիւլ անվան հիշատակություն շկա:

Վերին Ղարանլուխում կա «Առաջնորդ գիւղիս» Սուրբառ աղա ԶԿԶ (1517) թվականից և նրա ազգատոհմը՝ մի քանի սերունդ, որոնց մեջ նաև բէկով կաղմբագիր անուններ, ինչպես՝ Էլշիսկէկ, սրա որդին Սելիմբակէկ, նաև ոմն Ղարախան 1691 թվականից, ապա տանուտեր Ղուկաս 1651 թ. և սրա գերզաստանի անդամները: Մարտունիում (ներքին Ղարանլուխ) ունենք Տանուտեր Սարգիս, որդի Պահին, 1650 թվականից և սրա մի քանի հաջորդները՝ նույնպես տանուտերեր:

9. ՓԻՐԻ, ՈՐԴԻ ՂՈՒՊԱԹԻՆ, ԹՈՌԻ ՊԵՐԱՄԻՆ (ՊԵՐԱՄԻՆ)

Տաթևի պարտավորագիրը ստորագրած տասն անձնավորություններից այս միակն է, որի մասին ոչ մի տեղեկություն գտնել շենք կարողացել. մեր նյու-

⁴⁷ «Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայք», էջ 249:

⁴⁸ Ղ. Ալիշանը («Սիսականի» մեջ) հիշատակում է նաև միջին Կղնուտ, ավերակ. սա ավելի մոտ է այժմյան Մարտունուն և միայն մի փոքր եկեղեցու ավերակներ են մնացել: Մենք հետաքառել ենք նաև Վերին Ղարանլուխից 3—4 կմ հեռու՝ ձորի մեջ դանվող «Գոմեր» կոչվող գյուղատեղի արձանագրությունները:

⁴⁹ Նման բերդ-պահակատուն կա նաև Սելիմի լեռնանցքի Վայոց ձորի մասում և կոչվում է Սուլիմա բերդ:

թերի մեջ. Հարկավ այստեղ հիշատակված երեք անձնանուններից յուրաքանչյուրն էլ կա, բայց անշատ և տարրեր տեղերից, հետեւարար վստահորն չենք կարող նույնացնել, մանավանդ որ զյուղի անունն էլ չկա հիշատակված:

10. ԿՈՒՆԴՈՒԶ ԳԱՆՉԱԿԵՑԻ

Տաթեի վավերագիրն ստորագրող այս վերջին անձնավորության բնակավայրը ձշտվում է տեղում պահպանված արձանագրությունների շնորհիվ: Այս գյուղը գտնվում է Կամոյի շրջանում (Նոր Բայազետ), քաղաքից 7—8 կմ դեպի հարավ, այժմ կոչվում է Բատիկյան (նախապես՝ Քյոսա Մահմատ):

Գյուղի Գանձակ անունով հին հիշատակությունը վերաբերում է Սիմեոն Օրեանցուն. այն հիշատակված է «Զամրոխ» մեջ՝ Հայրավանքի թեմական գյուղերից ցանկում⁵⁰: Ալիշանը, ինչպես նրան հետեւելով նաև Լալայանը, ենթադրում են, որ Գանձակ անունը Ստ. Օրբելյանի ցուցակի Գանձաղանտառը պիտի լինի⁵¹:

Արդ, ներկա Բատիկյան գյուղում կա մի հինավորց եկեղեցի, հավանաբար կառուցված IX դարում, որի ներսի և շրջապատի հուշարձանների վրա եղած արձանագրությունները ո՛չ միայն Գանձակ գյուղի տեղագրությունն են ձշտում, այլև Գունդուզի տոհմի մասին արժեքավոր մանրամասնություններ հաղորդում:

Եկեղեցու ներսում, նրա հարավային պատի տակ գրված է մի տափակ և խիստ մեծ տապանաքար (2,15×1,5), որը վերեկ մասում չորս աստիճաններով հետղհետե նեղանում է. տապանաքարի երեսին քանդակված է ննջեցյալ և արձանագրված է.

ԹՎ. ԶԿԲ: (1513) ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ԱԶԱՐԻ —

ԵԱ, ԱՅ ԷՐԱԶՆՈՒԴԻ ԳԱ. —

ՆՉԱԽԻՍ. Յ[Կ]Յ[Ե]Յ[Է]Ք Ի ՔԱ. —

ԵԱ ԳՈՒՆՏՈՒԶԱ Կ. —

ԱՆԿԱՅԵՑ[Ե] ՏԱԼԱՆԱՍ⁵²:

Նույն եկեղեցու ներսում, Հյուսիսային խաչթեի արևելք նայող երեսին գրված է.

ԵԱ ԿԱՅ[Ե]ՏՈՒԶԱ ԲՄ

ԱՐԴԻՔՆ, ՄԵՔ

ԳԱՆՉԱԿԱՅ ՄԵԾ

ՈՒ ՓՈՔՐ, ՇՐԱԱՅ —

ՊԱՏԻ ԳՈՒԱՆ ԳՈՄԵ

ԵՐ ԿԱԼՈՎԵ ՏՎԻՆՔ

ԵԿԵՂԵՑՈՅԱ ՎԼԱՄԵ:

ԵԱ տոհմի գործունեության հետ կապված հետեւյալ արձանագրությունն էլ է եղել այստեղ, որը մենք գտնել չկարողացանք.

⁵⁰ «Զամրոխ», էջ 284:

⁵¹ Ղ. Ալիշան, էջ 42: «Աղքաղը. Հանդես», 18, էջ 122:

⁵² Հ. Շահ Հիւաթունիանց, Բ, էջ 241: Մ. Մարտիրոսյանց, էջ 501: Ղ. Ալիշան, էջ 42:

⁵³ «Աղքաղը. Հանդես», 18, էջ 122: Ա. Զարաւությանց, էջ 501: Ղ. Ալիշան, էջ 42:

ԿԱՐՄԻՐ ԱՅ ԵՍ ՍՏԵՓԱՆՈՍ ՔԱՀԱՆԱՅ, ՈՐԴԻ ԿՈՒՆՏՈՒՅ.

ԱՐԻՆ, ՇԻՆԵՑԻ ԾՐՉԱՊԱՍ ԵԿԵՂԵՑԻՈՅԱ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՉ ԵՒ ՄԱԼԻ
ԲՄՈՅ ԱՐԳԱԽԵՆԻՆ ԵՒ ԵԳԲԱՐՅ ԻՄՈՅ⁵⁴.

Այս երեք արձանագրությունները (որոշ սխալներով) հրատարակված են՝
ինչպես ցույց ենք տվել ծանոթագրությունների մեջ, դրանցից բացի մենք զր-
տանք մեկ ուրիշը ես, զա մի մեծ խաչքարի վրա է, որը կանգնած է նույն եկե-
ղեցու բակում, մուտքի մոտ, նրա բիլին և ստորին մասում դրված է.

ԵՍ ՄԵԼԻՔ ՊԱՐԵՔ ՇԻՆԵԼ ՏՎՈ ԽՈԶՈ

ՈՐԴՈՅ ԻՄ ՄԵԼՔՈՒՄԻՆ.

ԱԽՍԵԿ ԿԱՋՄՈԴ, ԵՍ ԶԵՄ ԱՐԺԱՆ.

Այս արձանագրության մեջ հիշատակված անունները առայժմ չեն կապ-
վում նախորդների հետ, բայց ստորև բերվելիք այլ արձանագրությունները կը-
պարզեն նաև այս խնդիրը:

Այս փաստերով վերջանում են մելիքական այս տանը վերաբերող տեղե-
կությունները կապված Գանձակ գյուղի հետ, բայց ոչ ընդհանրապես: Խնդիրն
այն է, որ այս տոհմը, որին պետք է Աղարյան կամ Աղարիայի տոհմ անվա-
նել, մեղ ծանոթ հնագույն անդամի անունով, իր նստավայրը փոխել է մեջ
բերված վերջին արձանագրության մեջ հիշատակված մելիք Պարեքի օրոք: Այս
տոհմի հետ կապված հնագաւ հուշարձաններն ու արձանագրություններն ար-
դեն գտնվում են նույն շրջանի նորագույղ գյուղում, որտեղ և թաղված են տոհմի
ննջեցյալները: Նախքան տոհմի այդ տեղափոխության պատճառների մասին
հնիքություններ անելը, ծանոթանանք նոր վայրում պահպանված նրանց
հիշատակարաններին:

Նորագույղ գյուղի մեջ մնում է կանգուն IX դարի վերջին Սահակ իշխանի
կողմից շինված նշանավոր եկեղեցին: Այս եկեղեցու բակում էլ, նրա հորա-
վային մուտքի դիմաց, թաղված են Աղարիայի տոհմից այստեղ տեղափոխված-
ների ննջեցյալները, որոնց վրա կան արձանագրված հուշարձաններ և՛ դրան-
ցից ամենաընդարձակը և տոհմի պատմության և ազգաբանության համար
կարևորը՝ մի գեղաքանդակ խաչքարի վրա է, որի ճակատին և ստորին մասում
գրված է.

ԿԱՐՄԻՐ ԱՅ. ԵՍ Մ[ԵԼ]ԻՔ ԲԱՐԵՔՍ ԿԱՆԿԵՑ —

Ի ԶԵԱԶՈ ՎԱՍՆ ՓՐԿՈՒԹԵ. ՀՈԳՈՅ ԻՄՈՅ.

ՄԵԼՔՍԵԿ ԿԱՋՄՈԴ. ԲԱՐԵՔԲԻՆ Է ԽՈԶՈ.

Իսկ թիկունքին.

ԿԱՐՄԻՐ ԱՅ. ԵՍ ՄԵԼԻՔ

ԲԱՐԵՔՍ, ԵԳԲԱՅՐ ԻՄ

ԶԱՏԵՓԱՆՈՍ ՔԱՀԱՆԵԿ,

ՈՐԴԻՆ ԻՄ ԳՈՒՆԿԱՅ ԲԷԿ,

ՀԱՐՆ ԻՄ ԳՈՒՆՏՈՒՅ ԱԴԵԿ,

ԵԿԻՆՔ ԳԱՆՉԱՆԱՅ, ՇԻՆԵՑ —

⁵⁴ Ղ. Զարաւրական, Բ, էջ 124; Ղ. Արքայական, էջ 42; Մ. Ամբարձուան, էջ 501; ռԱղ-
արքը, Հանդես, 18, էջ 122.

Ենք ԿԱՐՄՈՒՆՃԱԾ, ՇԻՆԵՑԻՆՔ
ՇՐՋԱՊԱՏԱ, ԿԱՆԿԵՑԻ
ԶԼԱՉԵՐԱ, ՈՐՔ ՅԵՐԱՓԻ
ՊԱԳԷՔ ՅԵՇԵՑԻՔ Ի ՔՍ:

Տոհմական այս ամբողջական հիշատակարանի մեջ բաց մնացած թվականը, զտնվում է այս հուշարձանին հարավից կից մյուս խաչքարի վրա, որի վերին մտածրում գրված է.

ՄՅ Խ[Ա]ԶՅ ԵՎԻՍՍ.ԲԵՏԻՆ.

ՄԵԼԵՔՈՒՔ ԿՈԶՄՈՂ. ԹՎ. ԾԴ: (1555):

Այստեղ հիշատակված եղիսարեան անկասկած մելիք Բարեքի ամուսինն է, իսկ հիշատակված թվականը վերաբերում է երկու խաչքարերին, որոնք ինչպես առաջինի մեջ էլ տափած է՝ շինված են միասին, դրան կարող ենք ավելացնել և այն, որ այս շրջանի նշանավոր կազմող Մելիքսեթը, ինչպես և նրա հետեւրդ Քիրամը, որոնք շատ այդպիսի խմբական-տոհմական խաչքարեր են կազմել, սովորություն ունեն դրանցից միայն մեկի վրա թվական նշել և իրենց ստորագրությունը դնել:

Հուշարձանների այս խմբին է առնվազամ նաև զույգ խաչքարերի դիմաց դանվող տափակ ու մեծ գերեզմանաբարը (3 մ երկ. և 76 սմ լայն.), որը խրված է զետնի մեջ, երեսի կենտրոնում պատկերված է գավազան, որի երկու կողքերին արձանագրություն, իսկ ծայրերին մի շորբոտանի, հոշոտող վազը, եղերու, որի սուների տակ գալարված վիշապ: Տապանաբարը, զտնվելով եկեղեցու բանուկ մուտքի դիմաց, ենթակա է եղել կոխոտման, այդ պատճառով էլ գրեն այժմ միանդամայն աննկատ են, զեռն Սմբատյանը արտադրել է միայն անկապ տառեր, ավելացնելով. «ով կարող է թող կարդա, թե քաջ է թող խմանա»: Կակալայանը կարդացել է հետևյալը.

ԵՍ ՄԵԼԵՔ ՈՀԿԱԾ ՏԱՓԱՆՍ ՇԻՆԵՑԻ ՀՕՐ ԻՄՌԻՄ ՄԵԼԵՔ

ՊԱՐ(ԼՔԻՆ)՝⁵⁵:

Այս տապանաբարը մելիք Բարեքինն է. դա անկասկած է. նա նման է իր մեծությամբ ու ձևով Գանձակի եկեղեցում զտնվող իր պատ Ազարիայի տապանաբարին, իսկ բանդակների ոճով՝ տապանաբարի զլսին կանգնած խաչքարին:

Կասկածելի է մեր կարծիքով կալայանի վերծանած մելիք ՈՀԿԱԾ անունը, որ մեր կարծիքով պետք է ուղղել՝ մելիք Գունկչայ, որը Բարեքի որդին է ըստ մեծ արձանագրության և որը ժառանգել է մելիքությունը, և հոր Համար տապանաբար շինել տվել:

Տոհմի այս նշանավոր անդամներն են միայն թաղված եղել եկեղեցու բակում, իսկ երկրորդական անդամները թաղված են ընդհանուր գերեզմանատան մեջ, նրա հյուսիսային-արևմտյան ծայրում և կազմում են հուշարձանների մի մեծ խումբ (խաչքարեր և տապանաբար), որոնց ե՛ առանձնակի խումբ լինելը և՛ բազմաթիվ խաչքարերի համար ընդհանուր պատվանդանի կառուցումը և՛ անուններն այդ են ապացուցում: Այդ բազմաթիվ անունների մեջ սերնդական

55 Մ. Ա Ժ Բ Ա Մ Խ Ա Ն Յ, էջ 483: «Աղապար, Հանդես, 18, էջ 117: Համբաւթունչանցը ենթադրել է, որ դա 1X դարում եկեղեցի շինող իշխան Ամհակի տապանաբարն է (Ստորագրութիւն, թ, էջ 238):

ուղղակի կապ անհնար է հաստատել, որովհետև թիշ գեղքերում են նաև հոր ու պատի անուններ հիշատակված, այդ պատճառով էլ մենք զրանցից միայն մեկի լրիվ տապանագիրը կտանք, իսկ մյուսներից որոշ անուններ և թվականներ միայն։ Այդ խմբի կենտրոնական մասում մի տապանաքարի վրա դուժիածէ գրված է։

Ի թվ. Ո.9.: (1557) ԱՅՍ ՀԱԼԱԼ ԷՊԻՍԿ[ՈՊՈ]ՍՆ, ՈՐ Է
ՈՐԴԻ ՄԱԼԻՔ ՊԱՐԵԳԻՆ, ԹՈՌ ԿՈՒՆԴՈՒԶ ԱՂԲԵ

իսկ արևելյան ճակատին։

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՄ ՀԱԽՆԱԶԱՐԻՆ։

սրա մոտ կան իրար կողքի տապանաքարեր, հետեւյալ անուններով։

1. ՏԱԶԲ ՅԷԿ, 1581 թ.
2. ՇԱՀԱՐԻԹԱՆ

նույն շարքի խաչքարերի վրա։

1. ՄԵԼՔՈՒՄ
2. ԽԱԶԱՏՈՒՐ

մի պատվանդանի վրա կանգնած երկու խաչքարերի վրա։

1. ԽԱՆՈՒՄ ԱՂԱ, 1582 թ.
2. ԳՈԶԿՈՅ ՊԵԿ

սրա մոտ պատվանդանի վրա կույզ խաչեր։

1. ՈՒԼՈՒԽԱՆ
2. ՄԵԼԻՔ ՊԵԿ

Հատկապես նշանավոր է այն, որ ինչպես վերոհիշյալ, այնպես էլ այս տոհմական գերեզմանոցում կանգնած գրեթե բոլոր խաչքարերը թիրամ կազմողի ձեռագործներն են։

Այս տոհմին վերաբերող մեր նյութերի մեջ կան երկու խաչքարեր ևս, որոնք գտնվում են Գանձակ և Նորագուղ գյուղերից գուրս։ Դրանցից մեկը մի փոքրիկ խաչքար է՝ այժմ ազուցված Կամո քաղաքի ս. Կարապետ հկեղեցու պարսպապատի մեջ, արևմտյան մուտքի մոտ, արտաքուստ, որտ ճակատին երկու տողով գրված է։

[ՍԲ ԽԱԶԱ ԲԱՐ[Է]ԽԱՆՈՒՄ ԲԱՐԵՔԻՆ։

ՔԻՐԱՄ ԿԱԶՄՈՂ։

Երկրորդը Սարուխան (անցյալում Դալիղարտաշ) գյուղումն է, գյուղամիջում կա թուխ Մանուկ անունով մի հասարակ մատուռ, որի հյուսիսային պատի մեջ ներքուստ ազուցված է մի գեղքաբանդակ խաչքար, որի նախնական վայրը ճշտել անհնար է, այդ խաչքարի բիզին և շրջանակներին գրված է։

ԿԱՄԻՒԽԵ ԱՅ ՄԵԼԻՔ ՊԱՐԵԳԱ, ՊԱՐՈՒՆ

ՄԵՐՀԱՎԱ, ԿԱՆԿԱՑՈՒՑԵ[Ք] ՍԲ. ԽԱԶԱ ՏՐ. ԲԱՐՍԵՎԵՒՆ]

ՄԵՔՍԵԹ ԿԱԶՄՈՂ։

ԹՎ. : ԶՊ. : (1549)

Սրանով ավարտվում են մելիքական այս տոհմի հետ կապված հուշարձանների և արձանագրությունների վկայությունները, բայց այսքանը միանգամայն բավարար է, ոչ միայն մեր հիմնական նյութի՝ տոհմի տեղադրության և աղքարանության ձշտման համար, այլև որոշ ընդհանուր գիտողություններ անելու:

1. Տոհմի մեզ ծանոթ հնագույն անդամը Ազարիան է, որի համար մելիքական տիտղոս չի գործածված նույնիսկ նրա տապանաբարի վրա, այլ միայն «առաջնորդ Գանձակի»:

2. Ազարիայի մահվան տարին՝ 1513 թ. նրա որդի Կունդուզը Տաթեի փաստաթղթի տակ նույնպես մելիք տիտղոս չի գործածել. զրանից հետո նրա անունը մեկ անգամ մելիք Բարեքի թողած արձանագրության մեջ է հիշատակված և աղա կոչումով 1555 թ.: Այս բոլորից հետեւմ է, որ Կունդուզը նույնպես մելիքի տիտղոս չի ունեցել:

3. Տոհմի անգամներից Կունդուզի որդի Բարեքն է միայն մելիքության աստիճանի հասել, դեռևս իր հոր կենդանության ժամանակ՝ 1555 թվականից տուչ, բայց ձշտորին ե՞րբ, անհայտ է:

4. Մելիք Բարեքը այս տոհմի ամենաուժեղ դեմքն է եղել. մելիքության աստիճան ստանալուց հետո իր նստավայրը Գանձակից տեղափոխել է Նորազուղ գյուղը:

Նորազուղը մինչև նոր Բայազետի բաղար դառնալը (XIX դարի սկիզբ) եղել է այս շրջանի վարչական կենտրոնը և ամենամեծ գյուղը: Դեռևս Զաքարյանների օրոք, երբ Գեղարքունիքի այս մասերը պատկանում էին Իվանեին, նրանց գործակալների նստավայրը Նորազուղն էր: Թվում է, որ հենց այս հանգամանքն էլ մելիք Բարեքին թելադրել է իր նստավայրը տեղափոխել հին իշխանականիստ վայրի համբավ ունեցող այս գյուղը, թերեւ հեռավոր ավելի մեծ ծրագրերի երազով⁵⁶:

Մելիք Բարեքի տարրեր գյուղերում կանգնեցրած հուշարձանները մատնացուց են անում, որ նրա իշխանությունը եղել է ընդարձակ, այն տարածվել է առնվազն մի շաբթ գյուղերի վրա:

Տաթեի փաստաթղթին ստորագրած «մելիքների և տանուտերերի» տեղադրությունն ու տոհմագրությունը ձշտելուց հետո՝ փորձենք որոշել թե զրանցից որո՞նք են մելիքներ և որո՞նք տանուտերեր: Բայց այդ խնդիրը պարզելու համար անհրաժեշտ է երկու խոսքով հիշատակել, թե ի՞նչ հասարակական իմաստ և բովանդակություն ունեին մելիք և տանուտեր տերմինները մեր պատմության այս վերջին դարերում:

Մելիք իշխանական տիտղոս էր, որը արվում էր պարսից շահերի կողմից տեղական ազգեցիկ տոհմերի ներկայացուցիչներին՝ հատուկ վաստակների համար: Այդ կոչումը, ինչպես և ստացած տիրույթը, համարվում էր ժառանգական, բայց մելիքի մահվանից հետո նրան հաջորդողը պիտի իր հաստատումն ստանար շահից: Իր ժամանակի համար դա ամենամեծ արտոնությունն ու պատիվն էր, որը կարող էր ստանալ մի հայ իշխանիկ և ստացողներն այն գործառում էին հպարտությամբ: Պարզ է ուրեմն, որպես միայն շահի կողմից տրվող ու հաստատվող այդ կոչումը ինքնազլուխ կերպով առինքնել հնարավոր չէր: Այս տեսանկյունից բննելով Գեղարքունիքի մելիքների ու տանուտերերի ցան-

⁵⁶ Թերեւ հենց այս պատճառով էլ նորազուղը Կամոյի շրջանի միակ գյուղն է, որը պահպանել է իր հին հայկական անունը:

Կ ՈՒԽ ՏՈՒՀ Զ Ա Զ ԱՐԵՎԱՆ Ե Յ Տ Տ Ե Ր Ա Տ Ա Ր Ա Ր Ա

Ա Տ Ա Ր Ա Ր Ա	1557.	Մ Ա Լ Ի Ք Ա Մ Ա Ր Ա Ր Ա	1549, 1555	Ա Բ Ե Վ Ա Ր Ա Ր Ա	1555	Ա Ր Ա Ր Ա Ր Ա	1513, 1555	Ա Բ Ե Վ Ա Ր Ա Ր Ա	1557,
Ա Տ Ա Ր Ա Ր Ա	1557.	Մ Ա Լ Ի Ք Ա Մ Ա Ր Ա Ր Ա	1549, 1555	Ա Բ Ե Վ Ա Ր Ա Ր Ա	1555	Ա Ր Ա Ր Ա Ր Ա	1513	Ա Բ Ե Վ Ա Ր Ա Ր Ա	1557,

կը, կարող ենք տաել, որ նրանք են մելիքները, որոնց համար մեր մեջ բերված նյութերի մեջ գործածված կա այդ կոշումը. իսկ այդպիսիները հետևյալներն են.

1. Մելիք Փիբհամզե.
2. Մելիք Թանգրիղուլի.
3. էջիկ Դելիդարդաշյան տոհմից՝ Մելիք Մալիսաս և Մելիք Մանուչարը.
4. Կունդուզ գանձակեցու տոհմից՝ Մելիք Բարերը:

Տաթևի պարտավորագրի տակ ստորագրված մյուս բոլոր անձնավորությունները, հետեարար, տանուտերեր են:

Այս շորս մելիքական տներից երերի նստաց գյուղերը գտնվում են ներկա Կամոյի շրջանի (Նոր Բայազետի, ավելի հնում Զորք կամ Զորո գավառի) մեջ: Դժվար է որոշել զրանցից յուրաքանչյուրի տիրութիւն սահմանները, քանի որ մեր ձեռքի տակ եղած աղբյուրները ոչինչ չեն հիշատակում այդ մասին, բայց պիտի հավանական համարել, որ այդ ամբողջ շրջանը, իհարկե ոչ հավասարապես, բաժանված է եղել այս երեք տոհմերի միջև: Մոտավոր զաղափար կազմելու համար շրջանի տնտեսական ու մարդկային արժեքի մասին՝ կարող ենք հիշատակել Սիմեոն Երևանցու աշխատությունը, որն իր ժամանակով մոտ է ուսումնասիրվող զարաշրջանին: «Զամրոխ» մեջ զետեղված Հայրավանքի թեմի գյուղերի ցանկը ծածկում է ամբողջ Զորք գավառի կամ ներկա Կամոյի շրջանի սահմանները, իսկ այդ ցանկում հիշատակված է 22 գյուղի անուն:

Հնարավոր է կարծել նաև, որ հենց հիշատակված շորս մելիքական տներին ենթակա գյուղերի տանուտերերն են, իրենց մելիքների հետ միասին, Տաթևի վավերագրի տակ ստորագրությունը. այդ գեպքում այս շորս մելիքների տիրություները զրավել են պատմական Դեղաբրունիքի Զորք և Կողարակ գավառները (Նոր-Բայազետի և Մարտունու), բայց այդմ գյուղերի թիվը ավելի քան կրկնակի շափով կմեծանալ: Նրանց սահմանը կմոտենա մելիք Շահնազարյանների տիրութիւն սահմաններին. զա ավելի հավանական է թվում մեզ⁵⁷:

Այժմ տանուտերերի հարցը.

Հայկական այդ հին տերմինը պատճության ընթացքում գործածվել է բազմաթիվ նշանակությամբ. մեզ զբաղեցնող XV—XVII դարերում, ինչպես այն հիմնավոր կերպով բացատրել է Լ. Խաչիկյանը, տանուտեր բառը երկու հիմնական իմաստ ունի. ա) զերգաստանի ավագ — տանուտեր, որոնց թիվը միևնույն գյուղում կարող էր տասնյակների հանել, բ) գյուղի ընտրութիւն տանուտեր. կոչվել է նաև ու բյոխվա (բայց արձանագրությունների նաև առաջնորդ), որը մեկ հատ էր լինում յուրաքանչյուր գյուղում: Առաջինի իրավասությունը սահմանափակվում էր իր զերգաստանի ներքին և արտաքին հարաբերությունների կառավարմամբ, իսկ երկրորդինը՝ ամբողջ գյուղի⁵⁸:

57 Ի առքերություն Գեղամա Երկիր. Գեղարքունյաց Երկիր հին հասկացությանը, որն ընդուրելում էր Սևանա լճի ամբողջ ավազանը, միջին դարերում Գեղարքունի գավառ հասկացությունը ընդդրկում էր հիմնականում ներկա Կամոյի և Մարտունու շրջանները, առանց Սոթքի (Բառարգեշարի) շրջանի: Գեղան Ստ. Օրբելյանը «Գեղարքունի գավառ» և «Սոթք գավառ» վերնագրերի տակ և անշատ կազմել է գյուղերի իր ցանկերը:

58 Լ. Խաչիկյան, XIV—XV դարերի հայկական գյուղական համայնքի մասին, «Պատմաբանասիրական հանդես», 1958, № 1, էջ 113—117, տե՛ս նաև նույնի՝ «Ժե զարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, Երևան, 1958, էջ LXXXVIII—XCIII:

Մեր ձեռքի տակ եղած արձանագրական բազմաթիվ նյութերը լիովին համ-
րնկնում են տանուտերերի այս բնորոշմանը և ավելորդ ենք համարում դրանց
մեջ բերելը: Բայց ի հաստատություն է. Խաչիկյանի այն ճիշտ կուահման, որ
ընտրովի տանուտերերը ժառանգական դառնալու միտում ունեին, ուղում ենք
երկու խոսք ասել և փաստ նշել: Յեղադալական իրավակարգում տնտեսական ու
պաշտոնի բերումով ձեռք բերած մի գերդաստանի հեղինակությունը միշտ էլ
ժառանգական դառնալու այդ միտումն ունի: Գեղարքունիքի մեր հավաքած
արձանագրությունների մեջ կան բազմաթիվ փաստեր, ուր տանուտերի 3—4
սերունդ շարունակում է այդ պաշտոնը. այս հոդվածի մեջ էլ նման օրինակներ
կան, օրինակ Շաղուրաթ Գավառեցու առհմը: Մենք ունենք արձանագրություն-
ներ, ուր ասված է ննջեցյալի մասին, որ 60 տարի տանուտերություն է արել.
Բասարգեշարի շրջանի Ղամիշլու գյուղի գերեզմանատան մեջ մի մեծ խումբ
խաչքարեր և գերեզմանաքարեր կան, որոնք պատկանում են գյուղի տանու-
տեր ընտանիքին, հետաքրքրին այն է, որ այդ ընտանիքի մի կին անդամն էլ է
գյուղի տանուտեր եղել. նրա տապանաքարի վրա գրված է.

**ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՏԻՍԻՆ, ՈՐԻ: (30) ՏԱՐԻ
ԱՌԱՋՆՈՒՐԴ ԷԿԱՑ ԳԵՂՈՅՍ:**

Եռոքի ուրիշ տապանաքարերից երկում է, որ Ատիսը կին է, մայր Մելքո-
նի, որը նույնպես գյուղի առաջնորդն է եղել: Ատիսի անունը հիշատակող մի
այլ տապանագիր թվագրված է 1556 թվականով:

Մելիքների ժամանակ տանուտերերի ընտրովի լինելու վերաբերյալ, թեև
այլ ժամանակի, բայց մի կարևոր փաստաթուղթ է մնացել. այն գրել է Արցախի
Մելիք Հաթամը. Մազավուզ գյուղի հասարակությանը հայտնում է, որ հաս-
տատում է նրանց բնարած Մելքոնին որպես իրենց գյուղի քյոխվա, պատ-
վիրում է հնագանգվել նրան. հայտնում է նաև, որ եթե փոշմանեն՝ ինքը հաշվի
չի առնելու նրանց տրտումը: Փաստաթուղթը գրված և կնքված է 1779 թ.
միետրվար 15-ին⁵⁹:

Մելիքների հետ միասին Տաթևի փաստաթուղթն ստորագրած տանուտերերը,
անշուշտ, ամբողջ գյուղի լիազորությունը ներկայացնողներն են: Այդ փաստա-
թուղթն իր ժամանակի համար մի կարևոր գործարք էր, որի արժեքը կախված
էր ստորագրողների իրավասության շափից:

С. Г. БАРХУДАРЯН

**МЕЛИКИ И ТАНУТЭРЫ (СТАРШИНЫ) ГЕХАРКУНИКА
СОГЛАСНО ОДНОМУ ДОКУМЕНТУ ТАТЕВСКОГО МОНАСТЫРЯ**

(Р е з ю м е)

В находящейся под персидским владычеством Восточной Армении
в XVI—XVII вв. известную роль играли местные армянские меликства.

59 Մակար Եպ. Բարխուդարյանց, Արցախ, Բագու, 1895, էջ 221: Այս փաս-
տաթուղթն օգտագործել է նաև Լեռն, տե՛ս «Խոչայական կապիտալ», Երևան, 1934, էջ 166:

Невелика была их роль в политическом отношении, но весьма значительна в смысле защиты местного армянского населения и его древней культуры. В меликствах государственные налоги взимались своими средствами, суд и расправа чинились согласно старым народным обычаям. Меликства впоследствии оказывали содействие армянским освободительным движениям и поддерживали в них надежду на реальную помощь.

Меликства Гехаркуника остались вне поля зрения исследователей (мы не имеем в виду исследования о Мелик-Шахназарянах, так как они княжили в гаваре Сотк, в нынешнем Басаргечарском районе).

Важный документ о меликах Гехаркуника сохранился в четырех рукописях Матенадарана им. Маштоца. Согласно этому документу группа меликов и танутэров (старшин) Гехаркуника прибыла в 1513 г. в Татев и, ознакомившись с древними документами и устными свидетельствами братии монастыря, вновь подтвердила принадлежность гавара Гехаркуник епархии Татевского Монастыря. Документ подписали 10 человек. Спустя некоторое время добавили свои подписи еще несколько человек.

В настоящей статье рассмотрены вопросы, относящиеся к личностям, подписавшим документ, установлены место нахождения их резиденций и границы их владений. Автор собрал на месте богатый лапидарный материал, на основе которого выяснил, что из десяти лиц, подписавших документ, меликами являются лишь четыре человека, а остальные были танутэрами (старшинами). Автор составил родословное дерево нескольких поколений меликов, установил, где находились их резиденции и восстановил исторические названия нескольких сел.

S. G. BARKHOUDARIAN

LES MELIKS ET LES TANOUTERS DE GUEGHARKOUNI D'APRES UN DOCUMENT DU COUVENT DE TATHEVE

Le rôle, politiquement insignifiant, des méliks arméniens, sous la domination perse en Arménie orientale aux XVI^e—XVIII^e siècles, fut néanmoins remarquable en ce qui put concerner la population arménienne tant par la préservation du patrimoine culturel national et l'exercice des fonctions administratives (leyée des impôts et Justice) d'une part, que, plus tard, par la contribution des méliks à la lutte émancipatrice, qu'ils voulaient réelle, des Arméniens, d'autre part.

Quoique l'histoire des méliks arméniens en général ait fait l'objet d'études sérieuses, celle des méliks de Guégharkouni (sauf pour Mélik-Chahnazarian du canton de Sod dans la région actuelle de Bassarguétchar) n'a jamais été abordée.

Quatre manuscrits arméniens du Maténadaran d'Erévan renferme un précieux document relatif aux méliks de Guégharkouni qui, accompagnés par plusieurs tanouters, se rendirent, en 1513, au couvent de Tathève. Y

ayant pris connaissance de documents anciens et entendu les témoignages des moines, la délégation décida de placer le canton de Guégharkouni dans le diocèse de Tathève. Le protocole établi porte la signature de dix personnes. D'autres signatures y furent rajoutées ultérieurement.

L'auteur de l'article s'attarde sur la personnalité de chacun des signataires dont il détermine la situation sociale. Un voyage d'études entrepris sur les lieux mêmes lui a valu de recueillir un grand nombre d'inscriptions lapidaires dont il ressort que les dix premiers signataires se componaient de 4 méliks et de 6 tanouters.

L'auteur propose de même un tableau généalogique et donne des précisions sur la résidence respective de chaque mélîk et les anciens noms de plusieurs villages.